

Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆ



ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՄԱԿՐԹՅՈՒՆԸ

ՀԱՅՊԵՏՐՈՎ

891.99.03

Թոմանյան

7976

թ-88

Թոմանյան, Ա.

Հովհաննես Թոմանյանի Տառ-

կուրզուն (1869-1883)

Sp

1/~~X~~

14/~~X~~

Կուրզուն

894.99.092 [Բանական] Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՄՓՈԳԱՆ Հ 1961 թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇՈՒՄԱՆՅԱՆԻ
ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ
(1869—1883)

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

A 6480



Z U S M E S Z R U S

ՀԱՅԵՐ ՄԱՆԿԱՐԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1946

Н. ТУМАНЯН

Детство Ованеса Туманяна

(На армянском языке)

Армгиз, Ереван 1946





ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Մանկության օրերը յուղաքանչյուր մարդու կյանքում, առավել ևս գրողի կամ որևէ այլ ըստեղծագործողի կյանքում, ուժեղ են տպագործում, անջնջելի հետքեր են թողնում։

Իինեն երջանիկ ու պայծառ այդ օրերը, ինչպես՝ Լեվ Տոլստոյինը կամ Միքայել Նալբանդյանինը, թե ծանր ու դժվարին, ինչպես՝ Նեկրասովինը, Մ. Գորկունը, կամ Ալ. Շատուրյանինը—միևնույն է, խորն են ակոնվուան նրանք և հիշվում են միշտ՝ մինչև ծերություն, մինչև մահ։

Թումանյանի մանկությունը, որ նրա կյանքի ամենապայծառ շրջանն է կազմել, բանաստեղծի հուշերում մնացել է որպես՝ «լուսաշող երազ», որպես՝ «պայծառ առավոտ»։ Հետագայում նա առանձին կարուտով ու թախիծով էր հիշում այդ

օրերը, այդ օրերի հետ կապված վայրերը,
դեմքերն ու դեպքերը:

Թումանյանի կյանքի առաջին տասը տարին
անցել է իր ծննդավայրում՝ Լոռու Դսեղ գյուղում,
իր հայրենի օջախում։ Ապրել է քաղաքին ու քա-
ղաքի կովտուրային անծանոթ միջավայրում—հին
նահապետական գյուղում, ժողովրդի մեջ, նրա
ուրախ ու տիսուր օրերը տեսել, լեռնային շքեղ
ու շուայլ կուսական բնության գրկում՝ ազատ և
անհոգ ապրել։

Նա մանկուց տեսել է ու սիրել հայրենի Լո-
ռին, նրա ամպամած գեղեցիկ լեռներն ու ողջ
բնությունը, որ և բանաստեղծի ոգևորության
հարուտ աղբյուրն է հանդիսացել, նա մանկուց
լսել է ու սիրել ժողովրդի զրուցներն ու առակ-
ները, հեքիաթներն ու լեռնդները, որոնք նրա
ստեղծագործությանն առատ սնունդ են տվել։

Ինչպես վաղ մանկության, այնպես էլ Զա-
ւալ-օղլու (Սահմանավանի) դպրոցական տարի-
ների մասին բանաստեղծը թողել է նյութեր ու
նշումներ։

Օգտվելով բանաստեղծի թողած այդ ինքնա-
կենսագրական բնույթի նյութերից, ստեղծագոր-

ծովյուններից և նրա հարազատների՝ մոր, եղբոր, քեռիների, ինչպես նաև իր հասակակիցների պատմածներից՝ փորձ ենք արել տալ թումանյանի կյանքի այս շրջանը։

Այս գրքույկը «Թումանյանի մանկությունը և պատանեկությունը» վերնագրով առաջին անգամ լույս է տեսել 1938 թվին։ Սույն երկրորդ հրատարակությունը լույս է տեսնում ավելի ստուգված և ճշտված փաստերով և որոշ լրացումներով։

Ն. Թ.

Ողջույն ձեզ, ո՞վ ուրախ, ազատ
Անցած օրեր իմ մանկության..
Ա՛յս, ձեզանից ինձ մի բացատ
Անցատել է հավիտյան*). ..

ՀԻՆ ԼՈՌԻՆ

Լոռու այն ձորում, որտեղ 1898 թվից
Դեբեղ գետին զուղահեռ երկաթուղին է
անցնում, իսկ այժմ Զորագէսի էլեկտրո-
կայանն է լուսավորում շրջակա գյուղերը,
որտեղ հիմա օճապտույտ լեռնուղիներով

*) «Բանաստեղծություններ» II հ. 1892 թ. Մոսկվա.
էջ՝ 90:

ավտոներն են սլանում, այնտեղ մեզանից
յոթանասուն տարի առաջ մութն էր ու
խավար, վայրի և ամայի:

Լոռու ձորերը ծածկված էին խիտ,
անանցանելի անտառներով, որտեղ փար
թամորեն աճում էին հաստաբուն ընկուզե-
նիները, կաղնին, ու հացենին, հաճարե-
նին ու լորենին, վայրի տանձենին ու սա-
լորենին և այլ պտղատու կամ անպտուղ
ծառեր: Բարձրաբերձ լեռները հարուստ
էին վայրի կենդանիներով ու թռչուննե-
րով, ժայռերի գլխին թռչկոտում էին
այծյամներն ու երեները:

Իր հայրենի անտառների բուսական և
կենդանական աշխարհի բազմազանության
և հարստության նկարագրությունը Թու-
մանյանը տվել է «Քաջերի կյանքից»
պատմվածքում.

«...Դսեղի հանդի սահմանները հարա-
վից սկսվում են զովասուն, բարձր լեռնե-
րով, հյուսիսում վերջանում անդնդախոր
ձորերով: Նրա հարավային սահմանում՝
Քոշաքարի ժեռուստ կատարին թռչկոտում

է քոչը*) և բուսնում խանձիլ, իսկ հյու-
սիսում՝ «Զաղի ձորում» ապրում է կարիճ
և հասնում խաղող:

Այս երկու սահմանների մեջ կան
թանձրախիտ, կուսական անտառներ, որ
կացնի ձայն չեն լսած, ուր ծառերի փշակ-
ներում բուն է դնում մեղուն, թալանե-
րում ապահով վիստում են երեները, մո-
ռուտներում ինքնիշխան թագավորում է
արջը, և շամբուտներում հանդիսաւ ապ-
րում է վարազը: Կան ժայռեր, ուր բուն
են դնում արծիվները և թուչկոտում այծ-
յամները...»**):

Իր դիրքով Լոռին մէ գեղեցիկ ու ա-
նառիկ լեռնագավառ է՝ կղզիացած և ա-
պահով, որ հնում՝ ահ ու փախի տարինե-
րին ապաստան էր հանդիսանում շրջա-
նի բնակիչների համար: Մինչև հիմա էլ
այդ ձորերում մնում են ավերակ տնակնե-

*.) Գոշ — վայրի այծ:

**) «Հարիղոն», Գրական հանդես, 1894 թ. Դիբք Ա.

ըի հետքերը, դեռևս կանգուն կամ քանդված, մամուապատ մատուռները:

Լոռին պատմական հարուստ անցյալունի: Այդ լեռնագավառի պատմական հետաքրքրական շրջանը սկսվում է 10-րդ դարից, երբ հիմք է դրվում Կյուրիկյան թագավորությանը: Այդ ժամանակ էր, որ կառուցվում էին այժմ պատմահնագիտական մեծ նշանակություն ստացած բազմաթիվ հուշարձաններ՝ վանքեր, որոնցով հարուստ են Հաղպատն ու Սանահինը, ապա Օձունը (Ուղունլար), Արդվին, Դսեղն ու մյուս գյուղերը: Դսեղի ձորումն է կառուցվել Ս. Գրիգորի բարձրաշեն վանքը: Այդ վանքի կիսավեր պատերը մինչև հիմա էլ կանգուն են մնում նույնանուն գեղեցիկ ձորում:

Հին Լոռու ընդհանուր պատկերը ամբողջանում է այն պատմական խաչարձաններով և հուշարձաններով, որոնց գեղեցիկ նկարագիրը տեսնում ենք Թումանյանի «Լոռեցի Սաքոյում»:

... էս տախտի վրա աղոթում մի վանք,
էն ժայռի գլխին հըսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կըոինչն է տարածվում մերթ-մերթ,
իսկ քարի գլխից լուռ մարդու նման,
Նայում է ձորին մի հին խաշարձան...

Ավերակ տներով ու հուշարձաններով
Հարուստ խոր ձորի միջով հոսում է Դե-
բեղ գետը՝ մերթ սրբնթաց ու գիծ՝ իր
Ժայռոտ ափերը ծեծելով, մերթ մեղմ ու
Հանդարտ՝ թերը փոելով իր լայն հունի
մեջ:

Դեբեղի գլխավոր ճյուղերը երկուսն
են, մեկը սկիզբ է առնում Փամբակի լեռ-
ներից և հոսում է Փամբակի ձորով, մը-
յուսը՝ Զորագետն է, որ գալիս է մթին
(Ղարախաչի) սարից՝ Ստեփանավանի
ձորով: Այդ երկու վտակներն են, որ Լո-
ռու ձորում, Քոլագերան կայարանից ներ-
քև միանալով կազմում են Դեբեղ գետը:

Դեբեղի աջ ափից սկսվում են ան-
տառները և Դսեղի այդիներն ու բանջա-

Դաստիարակություն

Պահպանական մի ժեռարկ

(1933 թ. բասմակարից)

բանոցները։ Դերեղի ձորումն է գտնվել
Թումանյան տան պատական հին ընկուզե-
նու այգին և ջրաղացը։

Դերեղի ձորափին՝ բարձր ժայռերի
գլխին, մի լայն և ընդարձակ հարթավայ-
րի վրա գտնվում է Դսեղ գյուղը, որի
նկարագրությամբ է սկսվում Թումանյա-
նի անդրանիկ պոեմը «Մարոն», որ գրել
է 18 տարեկան հասակում—1887 թվին։

Մեր գյուղն էն է, որ հըպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին՝
Զեռը տըված ճակատին՝
Միտք է անում տըխրադնմ,
Ինչ է ուզում՝ շըգիտեմ...

Գյուղի երեք կողմում փոված են ար-
տերն ու արտները, որոնք շրջափակված
են և կտրված ձորերով, չորրորդ կողմում՝
Հարավում-վոքրիկ լեռնաշղթան է՝ Քո-
շաքար սարով։ Գյուղի դաշտերն ու ար-
տերը հարուստ են գույնզգույն և անուշա-

Հոտ վայրի ծաղիկներով ու վարդի թփերով:

Դսեղ գյուղից հեռու, հորիզոնի վրա երևում են Թումանյանի ստեղծագործություններում այնքան հաճախ հանդիպող լեռները՝ Լալվարը, Դվար, Չաթինդաղը, Ղարախաչը, Քոշաքարը:

Դիմացի հարթավայրի վրա, Դերեղի ձախ ձորափին, երեսում են Լոռու գյուղերից մի քանիսը՝ Զորագյուղ, Ծաթեր, Խորթան, Ռւզունլար, Մղարթ, Այգեստան և այլն:

Դսեղն իր գեղեցիկ և անառիկ դիրքով իսկապես որ նման է մի «բնակերտ ամբողջի»: Գյուղի բարձրությունից նայելով Դերեղի խորը ձորին և քարածայուղին՝ հիշում եք բանաստեղծի «Լոռեցի Սաքոն» պոեմի հետևյալ տողերը.

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝

Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ Հայացքով իրար նայում են հանդարտ...

Այս տարբերակը պահպանվում է Թումանյանի:



ՊԱՊԵՐԸ

Թումանյանը ծնվել է 1869 թվի
փետրվարի 7-ին (հ. տ.) Նահապետական
երբեմնի հարուստ և անվանի ընտանի-
քում :

Այն տարիներին, երբ ծնվել է Թու-
մանյանը, Դսեղ գյուղը մեծ չի եղել, ըն-
դամենը 60—70 տուն։ Այժմ 1300 տնից
ավելի է։ Կղմինդրե տանիքով միայն մեկ
տուն է եղել, հիմա տների կեսից ավելին
կղմինդրածածկ է։

Հայրական տունը, որտեղ ծնվել է
Թումանյանը, գյուղի սովորական տնե-
րից էր։ Մեկ հարկանի, հողածածկ գլխա-
տուն, կողքին՝ գոմը, տան առաջ՝ սրահ

և սալորենու փոքրիկ պարտեզ՝ վայրի
վարդի թփերով շրջապատված:

Հետագայում իր զրուցների մեջ բա-
նաստեղծը այսպէս էր հիշում հայրական
տունը. «Մի մեծ սենյակ ունեինք. օջախը
միշտ վառած. երկու կողմից տախտեր,
դոշակներ ու մութաքաներ դարսած: Բո-
յահայելին, կողքին սազը կախած, մոմա-
կալն ու մաղաշը,*) նկարներ...»

Այս տունը թումանյանի հոր կողմի
պապի՝ Օհաննեսի կահավորված սե-
նյակն էր: Թումանյանի պապը Լոռում
հայտնի է Եղել Օհաննես աղա անունով:
Պապին չի տեսել թումանյանը: Մանուկ
Օհաննեսը իր տատից ու տան մեծերից
հետաքրքիր զրուցներ ու պատմություն-
ներ է յսել իր նախնիների և իր պապի
քաջագործությունների ու խիզախ գործե-
րի մասին:

Թումանյանի հեռավոր նախնիները,

*) Մաղաւ—ունելիք, որով կտրում էին վառվող մոմի
ծայրը:

ինչպես ինքը թումանյանն է հիշատակում, պատկանում էին ազնվական տոհմին, եկվորներ էին, որոնք 10-րդ դարում թողնելով իրենց հայրենի Տարոնը՝ բնակություն են հաստատել Լոռու Դսեղգյուղում:

Նրանք ձանապարհներ են շինել այդ անդնդախոր ձորերում, կամուրջներ կառուցել, հուշարձաններ և աղոթարաններ կանգնեցրել, որոնց հետքերը դեռ մնում են Դսեղի ձորերում, անտառներում և հանդամասերում:

Այդ տոհմի պապերը արտաքին հարձակումների ժամանակ և ինքնապաշտպանության օրերին, ինչպես՝ Հասան խանի ասպատակության ժամանակ, գործի գըլուխ են անցել և պաշտպանել գյուղերի խաղաղ՝ բնակչությունը կոտորածից և կողոպուտից:

Թումանյանի պապը՝ Օհաննես աղան (1785—1868) անվանի զինվորական էր:

Օհաննես աղան բարձրահասակ էր և գեղեցիկ: Մեծ չիրուխ ուներ, սաթի ծայ-

ըով, թուրր կողքից կապած, սամույր
մուշտակը վրան։ Լավ ձի նստող էր և
հրացանածիդ. այս ժառանգական է եղել
թումանյան տոհմի մեջ։

Պապը՝ հյուրասեր էր, զրուցասեր,
սրախոս և զվարճասեր։ Այնքան է սիրել
զրույցը, որ իր տան պատի տակին, ճա-
նապարհի վրա 12 քար է տաշել տվել, որ
գյուղացիները գան նստեն, զրուցեն։

Իր բնավորության այս գծերով և
արտաքինով, ասում են, թումանյանը
շատ էր նման իր պապին։

— Օհաննես աղան թեև աղա էր,
բայց շատ հասարակ մարդ էր, — ասում էր
նրան մոտիկից ճանաչողներից ու ժամա-
նակակիցներից մեկը՝ Կիրակոս բիծեն։
Բնավորությամբ բարի էր և առատա-
ձեռն։ Հասարակ ժողովրդին միշտ օգնել
է, հողագուրկ գյուղացուն հող տվել։ Նա
իր ծաղրածուն է ունեցել Մուրադանց
Մարգար անունով, որը միշտ սագ էր ա-
ծում, առակներ պատմում, սրախոսու-

թյուններ անում և զվարճացնում Օհաննես աղայի հյուրերին»:

«Օհաննես աղան շատ լավ մարդ էր. ամբողջ Լոռին նրան սիրում էր, լսում: Մեծ մարդ էր. չափիցը դուրս նշաններ ուներ. դիվան էր կտրում, ժողովրդին պաշտպանում էր: Ամեն տեղ դիմավորում էին, շաբաթներով քեֆ անում»:— Այսպես էր պատմում Օհաննես աղայի մասին քեռի Սարոն, և ապա շարունակում.

— Հասան խանի ժամանակ գյուղումը աղ չկար. ժողովուրդը առանց աղ կոտորվում էր. նա գնաց ուղտի բեռներով աղ բերեց, ժողովրդին բաժանեց, ժողովրդին պահեց: Տուրքերը հավաքելու ժամանակ, երբ պետական պաշտոնյաները գալիս են հացահատիկ հավաքելու, ժողովուրդը դժգոհում է. Օհաննես աղան դուրս է գալիս պրիստավին ճանապարհ դնելու, որ իր եկած ճանապարհով ետքնա. չի լսում, աղան բարկանում է, ճա-

նապարհ է դնում և ասում .— Զուրը
անցկացրեք, թո՛ղ գնա»:

Օհաննես աղան բարեկամական կա-
պեր էր հաստատել հարեան շրջանների՝
Ղազախի ու Բորչալուի թուրքերի և
Վրացիների հետ և աշխատում էր հաշտ
ու խաղաղ պահել այդ ժողովուրդներին:

Մուսաստանից նա իր հետ բերել էր
ոռւս ջրաղացպան: Առաջինը նա էր, որ
կոռում մտցրեց մոմի գործածությունը:
Մինչև այդ Լոռվա գյուղերում ձեթի
ճրագներ են վառելիս եղել, միայն դրա-
նից հետո է սկսվել մոմի գործածությու-
նը: Մուսաստանից իր հետ բերել էր նաև
հայելի, նկարներ և այլն:

Ասում են, ավելի անվանի և հայտնի
է եղել Թումանյանի պապի հայրը՝ Օվա-
գիմ Յուղբաշին՝ քաջ ու հաղթանդամ,
Լոռու հայտնի իդիթներից մեկը: 18-րդ
դարում, շնորհիվ իր քաջադործություն-
ների, նա մեծ հռչակ է ստանում: Օվա-
գիմը խիստ էր, աժդահա ու քաջ:

Օվագիմ Յուղբաշու մասին այսպես

Էպատմում Խաչատուր Աբովյանը եր
«Վերք Հայաստանի» վեպում։ «Մենակ
Դսեղցի Մեհրաբյան թումանյան Հովա-
գիմի անունը՝ քարերը սասանացնում
էին։ Սարերի, ձորերի միջում մեծա-
ցած, գազանի ու հարամու արինը թա-
փելով էր նրա ոսկորները հաստացել։
Երկու տղամարդ նրա մեջքը չէին կարող
խռուել, հինգ մարդ նրա մեկ ձեռը չէին
կարող ոլորել, նրա գլուխը մեկ օր չէր
ցավել։ Կերածը մեղք ու կարագ էր, հա-
գածը շալ, կոխածը ծաղիկ ու չիման,
աղբըների վրա, մեշի միջումն էր նա օ-
րորոցումը աչքը բաց արել։ Նրան ի՞նչ
կդիմանար։ Աժդահա ու ոչ տղամարդ…
Ութ ախալեր ուներ, մեկը քանց մեկը
աժդահա։

...Վաթսուն ջանից ավելի հոգի՝
հարս, փեսա, թոռը, ծոռը՝ առավոտը՝
նրանց տանիցը դուրս էին դալիս, ըի-
գունը մթանր նրանց օճորքի տակին
քնում ու նրանց հարյուր տարեկան հերը
դեռ երեկվան երեխի պես՝ բեղերն ոլո-

բում, միրուքը սանդրում, փափախիր
կոտրում, նրանց հետ՝ պար գալիս՝ պար
գալի, խաղալիս՝ խաղում, սազ ածելիս՝
շատ անգամ ինքը սազը ձեռներիցը
խլում, ածում, խաղում, քսան տարեկա-
նի պես ձիու վրա նստում, ասպարը
գցում ու սարերում, ձորերում, չաղթի
տակին՝ պարզկա գիշերը՝ որդվոցը ի-
բան արած քաջությունները, լոռեցոնց
տղամարդությունը, հին, հին բաներից,
լազգուց, թուրքից հազար բաներ պատ-
մում...»

Օվագիմ Յուզբաշին մեռել է 40-ա-
կան թվականներին:

Օվագիմ Յուզբաշու հայրը՝ Մեհ-
րաբը՝ Լոռու ձորերի նահապետն էր:

Դյուղական մեծերի պատմվածների
համաձայն այսպես է նկարագրում Թու-
մանյանը իր ապու պապին՝ Մեհրաբին:

«...Մերունի Մեհրաբը, Օվագիմի
հայրը, Լոռու ձորերի նահապետը, իսկի
չեր էլ մտածում թե հարյուր տարին անց
է կացրել: Նրա վիթխարի, բարձր հա-

սակը կորացել էր, նորից ամբացել, ձեր-
մակ մազ ու միրուքը բռնեց կուրծք ու
երես և աժդահայի ահավորության հետ
խառնել, միացըել ծերության պատկա-
ռանքը»*):

Մեհրաբը բարձրահասակ, հաղթան-
գամ, հուժկու ձայնով տղամարդ էր.
Խելացի էր, արթուն և արի: Նրա անու-
նով Թումանյան տոհմի տունը կոչվում
էր նաև Մեհրաբանք կամ Ղուղղունանք՝
Երկարակյաց էին և քաջ:

Միանգամայն այլ ծագում և
տարբեր նկարագիր ունեն Թումանյանի
մոր կողմի պատկերը՝ գյուղի մյուս ծայ-
րի բնակիչները՝ Քոչարյանները: Նրանք
սարեցիներ էին. գյուղի առաջին հովիվ-
ներն ու տամարածները. նրանց տունն էլ
այդ պատճառով կոչվում էր՝ «սարըցու
տուն»:

Այդ տան նահապետը՝ տամարած
Օհաննես ապին, Թումանյանի մոր հայրը,

*) «Քաջերի կյանքից».

սարերում աչք բաց արած, սարերում
մեծացած, իթ տղաների հետ բերում է
սարերի կյանքը, շվին, բայաթին: Ինքը
Օհանես ապին շատ առողջ է եղել, ուժեղ
և ձախնեղ, մի աժդահա մարդ: Իր ամ-
բողջ կյանքը նա սարերումն էր անցկա-
ցրել և երբեք կյանքում չէր հիվանդա-
ցել: Օհանես ապին իր առաջի վշտից՝
կնոջ մահից կաթվածահար է լինում և
հարյուր ութ տարեկան հասակում վախ-
ճանփում: Մեռնելիս ցավով բացական-
չում է. «ա՞յ փուչ աշխարհ, արժե՞ր եր-
կու օրվա համար ծնվելը...»

Ահա այս երկու միանգամայն տար-
բեր գյուղական օջախների ծնունդ էր
Թումանյանը:

ՀԱՅՐԸ

Թումանյանի հայրը՝ Տեր-Թաղեռուր
գյուղի քահանաներից մեկն էր. նրա աշ-
խարհական անունը Ասլան էր. ծնվել է

1838 թվին, վախճանվել 1898 թվին:
Սկզբում, 1870—1872 թվերին, նա ուսա-
նում է Սանահնի վանքում. քահանա է
դառնում 1874 թվին, երբ Թումանյանը
4—5 տարեկան երեխա էր արդեն:

Տեր-Թաղեսուը թեև նույնպես ան-
վանի մարդ էր, բայց նա չուներ իր
նախնիների ո՛չ դիրքն ու կարողությունը
և ոչ էլ նրանց մեծ համբավը: «Հայրս
մեր տան վերջին ընկած բեկորն էր...»
ասում էր Թումանյանը:

Իր տնտեսությամբ Թումանյանի հոր
տունը միջակ տներից էր. ունեցել են՝
երկու կով, մի գոմեշ և մի քանի ոչ-
խար: Բայց չնորհիվ իր անվանի պապե-
րի և իր անձնավորության՝ Տեր-Թաղե-
փոսի տունը համարվում էր Լոռու պատ-
վագոր տներից մեկը:

Հմայիչ գեմք էր Տեր-Թաղեսուը,
սիրված ու հարգված գյուղի և լոռու
շրջանի ժողովրդի կողմից: Թումանյանն
առանձին սիրով էր խոսում իր հա-
սին:

Ամենապայծառ դեմքն էր նա, որ
լուսավորել է Թումանյանի մանկական
օրերը: «Ամենալավ» ու ամենամեծ բանը,
որ ես ունեցել եմ իմ կյանքում—այդ ե-
ղել է իմ հայրը: Նա ազնիվ մարդ էր և
ազնիվական՝ բառի բովանդակ մտքով:
Չափազանց մարդասեր ու առատաձեռն,
առակախոս ու զվարճաբան, սակայն
միշտ ուներ մի խոր լրջություն: Թեև
քահանա, բայց նշանավոր հրացանաձիգ
էր ու ձի նստող: Այդ ժառանգական էր
մեր ցեղի մեջ»*):

Ինչպես այս գծերը, այնպես էլ Հոր
բնավորության հիմնական գծերը ժա-
ռանգաբար անցել են Թումանյանին.
Թումանյանը բնորոշելով իր հորը, ասես
ինքն իրեն է բնորոշում. այնպես է նման
նա իր հորը:

Երբ խոսք էր յինում մեծ մարդկանց
մասին, նա ասում էր. «Մեծ մարդու
մասին գաղափար եմ կազմել իմ հորով:


*) «Ինքնակենսագրություն» «Ընտիր հատկածներ»,
էմմ. ք. Նազարյանի. 1907 թիվ, էջ՝ 265,

Մեծ մարդ էր. զարմանալի խորը մարդ,
անդունդի խորություն ուներ. լայն հո-
գի, մեծ սիրտ, մեղմ բնավորություն,
ժպիտր միշտ դեմքին»:

Ինչպես նրա կյանքի բազմաթիվ
դեպքերն ու զրուցները, այնպես էլ
գյուղի ծերերի պատմածներն այդ են
վկայում՝ նրա սրտի անսահման բարու-
թյունն ու բարի գործերը։ Նա ամեն
տաք վեճ մեղմացնում էր և վերացնում.
Նրա ժամանակ Դսեղ գյուղի մասին
ասում էին՝ արյունը ջուր անող գյուղ։

Թումանյանի հայրը բարձրահասակ
էր, նիհար, ժպտուն ու խոր աչքերով.
մազերը գանգուր ու վաղ ճերմակած-
ձյունի նման սպիտակ։

Թեև քահանա, բայց, ինչպես պատ-
մում են նրան մոտիկից ճանաչողնե-
րը, չի սիրել եկեղեցական ծեսերը։ Հա-
ճախ եկեղեցու զանգերը լսելիս գնացել է
գյուղամեջ զբուցի, կամ մարդ համա-



Նովի. Թումանյանի հայր Տեր-Թաղեռը (1839—1898)
1896 թ. լուսանկարից.

քել, բերել տուն զրուցելու, հետն էլ իր
չոնդուրն է ածել ու երգ ասել:

Պատմում են, որ Տեր-Թաղմասի
հյուրերից մեկը, տեսնելով պատից
կախված չոնդուրը, հարցնում է՝
«տե՛րտեր դու-չոնդուր ածե՞լ գիտես»։
Տերտերը թե «իդ հո ավետարանը չի,
որ չգիտենամ»։

Ինավորությամբ լինելով ուրախ և
հյուրասեր՝ նա իր շուրջն է հավաքում
շրջանի աշուղներին ու շվի ածողներին,
առակախոսներին ու զրուց անողներին
և այսպիսով իր տունը դարձնում է երգի
ու զրուցի կենտրոն։

Իր աղջիկներից մեկը՝ իսկուհին
պատմում է, թե ինչպես ինքը մի օր հոր
ձին վերցնում է, կժերը բարձում, գնում
հեռու աղբյուրը ջրի։ Ճանապարհին ձին,
որտեղ մարդ է տեսնում, կանգնում է։
Աղջիկը գալիս է տուն, հորը պատմում։
Հայրը.թե՝ «Այ որդի, եղ իմ ձին ա. ես
որ ճամփա եմ գնում, մարդ պատահելիս
կանգնում եմ զրից անում, ձիս էլ սովո-

րել ա»։ Զբույցի ժամանակ խոսքը տեղին էր ասում, ամեն խոսքի հետ էլ մի առակ։

Հոր Երդի ու զբույցի Երեկոները մեծ նշանակություն են ունեցել և խորն են ակոսվել Թումանյանի վառ Երևակայության մեջ. նա մանկուց ազգմում էր հոր Երդերից, ներշնչվում և սիրում Երդն ու զբույցը։

«Իրիկունները, Երբ տուն էինք Համաքվում, Հայրս թինկը տված ածում էր իր չոնզուրը և Երդում Քյոռօղլին, Քյարամը կամ որեէ Հոգեոր Երդ»։

Հայրը Երդում էր ավելի թախծոտ, արեելյան բայաթիներ, աշուղական խաղեր ու ժողովրդական Երդեր։ Հոր Երդի ու նվագի Երեկոները փոքրիկ Հովհաննեսի ամենաթանգ ու ամենանվիրական ժամերն են Եղել։ Ասում են, Եղբ Հայրը սազ էր նվագում, փոքրիկ Հովհաննեսը նստում էր շատ մոտ, նայում էր

նրա գեմքին և մեծ ուշադրությամբ լը-
սում... լսում էր իր հոր խոր հառաջող
եղանակները, նայում էր նրա բոցով
այրվող աչքերին, որոնք նայում էին հե-
ռո՛ւ, շա՛տ հեռու, և ինքն էլ բոցավառ-
ված, լցվում, համակվում էր հոր վշտոտ
երդերով:

Այսպես էր տեսել Թումանյանն իր
հորը, իսկ մորը՝ միշտ դժգոհ ամուսնու
անհոգ ու անփույթ ձեռվ ապրելուց:

Դրա համար է, ասում էր Թումանյա-
նը, որ երևակայում եմ միշտ հորս ան-
հոգ ու զվարթ զրույց անելիս, ծի նըս-
տած կամ չոնդուր ածելիս, իսկ մորս՝
հոգսի մեջ, գյուղից դուրս—մեր կորած
անասուններին ման գալիս...

Հայրը անփույթ և շոայլ ապրող
էր: Հաճախ էր պատահում, որ գյուղե-
րում աշխատածը թողնում էր դուրսը,
տալիս էր չունեո՞րներին, ինքը դատարկ
գալիք տուն: Շատ անգամ ստացածը

դրպանն էր ածում առանց նայելու, ու-
զողին էլ տալիս էր առանց հաշվելու,
ասելով՝ «ինքան ըլի, որ կնիկս չիմա-
նա»։ Վախենում էր հաշվով ապրող իր
կնոջից։

Կինը, չկարողանալով տանել իր ա-
մուսնու անհոգ ու շոայլ բնավորությու-
նը, մշտական վեճի մեջ էր հետը։ Իսկ
ամուսինը վախենալով նրա կովող բնա-
վորությունից՝ միշտ զաղտնի էր անում
իր բարեկործությունները։ Շատ է պա-
տահել, որ կնոջ բացակայության ժա-
մանակ Տեր-Թաղեսոսը իր տղային՝ փոք-
րիկ Հովհաննեսին կանգնեցրել է դռան
մոտ հսկելու, իսկ ինքը ցորենը լցրել է,
տվել մի որևէ չքավոր գյուղացու, կամ
սարից իջած թուրքի շարակը։

Թումանյանի մայրը իր ամուսնու
բարեսրտության մասին հետաքրքիր
դեպքեր շատ էր պատմում։

Մի օր աղունը ջաղացն է տանում
աղալու. ջաղացում տեսնելով մի գյու-
ղացի միրգ է ծախում, աղունը թողնում

է ջաղացում, միբոլ բեռնում ձիուն,
բերում տուն: Գալիս է տուն, կինը
հարցնում է ամուսնուն թե՝ «Տե՛րտեր,
բա ալյուրն ի՞նչ արիր»: Թէ՝ «Զաղա-
ցումը ջաղացպանը դեռ աղում ա»: Կի-
նը, թե՝ «Չէ՞ որ անտեր ա, կգողանան»:
Նա թե՝ «Չունեոր մարդիկ են, մի քիչ
էլ թող գողանան...»:

Մի ուրիշ անգամ էլ, մի սովի տա-
րի, տերտերը աղունը ջաղացն է տա-
նում աղալու, կինն էլ փուռը վառում է,
սպասում տերտերի գալուն: Բայց տեր-
տերը չկա: «Մթնել ա,—պատմում էր
Թումանյանի մայրը,— էրեխեքը լաց են
լինում, սոված են. տանն էլ հաց չկա,
մին էլ տեսնեմ՝ տերտերը ջաղացից գա-
լիս ա դատարկ, երկու կըկենի*) կռան
տակին:

Դու մի ասիլ, մի ձիաբեռ ալյուրը
կըկենի է թխել, դուրս է եկել հանդը,

*) Կրկենի—ջաղացում կամ սարում մոխրի մեջ
թխված հաց:

Հանդի սովոր հանդվորներին բաժանել
ու ինքը դատարկ եկել է տուն...»

Պատահել է, որ դաշտում հանդի-
պած չունեռ հանդվորին մերկ տեսնե-
լով՝ իր հագի շաղիկը տվել է նրան,
կամ թե չէ աշնանը դյուզի չքավորի
կամ այրի կնոջ չհնձած արտը հնձել է
իր վարձած մշակներով։

Լինելով կենսուրախ մարդ, շատ է
ոիրել երեխաների շրջանը. նրանց հետ
վեգ է խաղացել, կատակներ արել, գյու-
ղի ջահել հարսն ու աղջիկների հետ
շամբարձման տոնին վիճակ հանել:
Խաղով, մրգով և կատակներով է ոյտ-
հել նա իր երեխաներին։ Առանձնապես
սիրում էր իր մեծ տղային՝ Հովհաննե-
սին։ Հոր և որդու փոխադարձ այդ սե-
րը տարիների ընթացքում ավելի ու ա-
վելի է ուժեղանում և խորանում։ Պատ-
մում են, որ երբ 1890 թվին լույս է
տեսնում Թումանյանի բանաստեղծու-
թյունների առաջին ժողովածուն, հայրը
մեծ հրճվանքով է կարդում այդ գիրքը,

Հյուրեր է հրավիրում, ուրախանում,
քեֆ անում և ասում է՝

— Հիմի ինձ էլ մահ չկա...

Տեր-Թաղեսը սիրված էր ո՛չ միայն
Լոռու շրջանի գյուղացիներից, այլև հա-
րեան շրջանների՝ Բորչալուի, Ղազմախի
գյուղացիներից, և հատկապես թուրք
բնակիչներից։ Նա անշահասեր և մեծ
մարդու համբավ ուներ Լոռու շրջանում։
Հետագայում, 900-ական թվականներին,
Լոռում Հովհաննես Թումանյանին իր
հոր անունով էին ճանաչում։ Պատմում
են՝ 1905—1906 թվականներին, Հայ-
թուրքական ընդհարումների ժամանակ,
երբ Թումանյանը Ղազմախի շրջանի սու-
բրն է գնում երկու հարեան ժողովուրդ-
ներին հաշտեցնելու, թուրք բնակիչները
վախենում են երեալուց, բայց երբ իմա-
նում են, որ ձիավորներին գլխավորում
է Թումանյանը, գյուղի ծերերն ասում
են՝ «Նա Ասրան քեշիշի տղեն է, մի՛ք
վախի, գնացե՛ք, նրա հայրը մեծ մարդ
էր, մեր բարեկամն էր»։

Տեր-Թաղեռսը Լուսու շրջանի առաջադեմ դեմքերից էր, գյուղի, աչքի ընկերող հասարակական գործիչներից։ Նրա օրով է գյուղում գործածության մեջ մտել կաղամբը և ապա՝ կարտոֆիլը։ Նա է առաջին լամպը գնել, բերել Դսեղ, նավթի գործածությունը նրա օրով է սկսվել, մինչ այդ գյուղում վառում էին ձեթի և մոմի ճրագներ։ Այդ եղել է մոտավորապես 1873—74 թվականներին։

Տեր-Թաղեռսը շատ էր սիրում Թիֆլիսը։ Ամեն տարի ձիով կամ Փուրդոնով գնում էր Թիֆլիս, իր տղային տեսնելու։ 1898 թվին, երբ սկսվում է երկաթգծի կառուցումը, նա շատ է ուրախանում, որ հնարավորություն կունենա ավելի հաճախ գնալու Թիֆլիս, իր տղային տեսնելու։ Բայց հենց նույն տարին նա վախճանվում է և միայն գնացքի ձայնն է լսում ձորում։

ՄԱՅՐԸ

Թումանյանի հոր Հակապատկերն էր
մայրը՝ Սոնան: «Երկու, ծայրահեղորեն
տարբեր արարածներ հանդիպել էին
իրար»— գրում է Թումանյանն իր ծնող-
ների մասին:

Մայրը նույն գյուղից էր. սարերում
ապրած ու մեծացած, իր հոր նման՝ ա-
ռողջ, ուժեղ և գիմացկուն: Բարձրահա-
սակ էր, զեղեցիկ և կարմրաթուշ. կա-
տարյալ սարի աղջիկ, ինչպես գյուղա-
ցիներն էին ասում նրա մասին՝ «մի գիտ-
պախրի կով»: Աշխատասեր էր. մեծ
կամքի տեր, գյուղի անվախ կանանցից
էր. նա էր կառավարում տունն ու սարը:

Մայրը տարվա մեծ մասը սարե-
րումն անցկացնելով՝ իր երեխաներին էլ
սարերումն էր պահում, մեծացնում:
Սարն էր գնում վաղ գարնանը, ու մնում
մինչև ուշ աշուն: «Ճենց որ գարունքա-
նում էր, էն, ա սարն էի տանում էրե-
խանցը, — պատմում էր Թումանյանի



Հովհաննեսի մայր՝ Սոնա (1812—1956):
ՀՀ թ. բանկի պլղ

մայրը, — տանելուս էլ ապրանքը ձիուն
էի բեռնում, ապրանքի ետևից ոտով
զնում, որ ձիու վրա երեխեն չ'արվի:
Սարերումն էլ էն ծաղկուտ տեղերումն
եմ պահել, աղբյուրների մոտ կացել:
Սարում մնում էինք մինչև ձնի կաթոցը,
էն ա ձնի հետ կոլոլվելով դալիս էինք
գեղը. ամպը գոռում էր, չոքում, սե-
վակնում, չանգը կոխում . . . »

Թումանյանի մոր սիրած սարը, որ-
տեղ շատ է մնացել, և որտեղ պա-
հել է իր երեխաներին, կոչվում է
Ղարանլուղդարա — (Մթին Զոր): Այդ
սարը դժուկում է Քոշաքար լեռան մոտ,
դյուդից 40—50 կիլոմետր հեռավորու-
թյան վրա: Մինչև վերջին տարիներն
էլ, թեև ութսուն տարին անց էր կացրել
արլեն, էլի թումանյանի մայրը գնում
էր սար, սարերում անասունները պա-
հում և ձմեռվա կաթնամթերքը պատ-
րաստում: Վերջին անգամ՝ 90 տարեկան
հասակում, մի անգամ էլ Ղարանլուղդա-
րա սարն է գնում՝ վերհիշելու, վերադ-

թելու սարերում անցկացրած օրերը, սարի կարոտն առնելու:

Թումանյանն ասում էր. «Ինչ որ սարի բան կա իմ մեջ— դա իմ մորիցն է— Նանից: Թուչող կին էր և իմ մերը. արծվի թոփչք ուներ: Ամենաբարձր սարերում, ծաղկոտ տեղերում է պահել ինձ: Շատ բան է տվել ինձ մայրս, շատ... շատ էր սիրում ինձ»:

Մայրն անդրագետ էր: Մի անգամ երեխաներից մեկի հարցին, թե՝ Նանի, դու ուսումնարան գնացել ես,— նա պատասխանեց. «Բա, գնացել եմ, տասներկու ուսումնարան եմ աշխարտել...» ու սկսեց թվել այն բոլոր սարերը, ուր գնացել էր ամառները՝ կարմիր էր (այր), Ծաղկոտ ուրիշ, Քոշաքար, Ղարանլուղդարա, Կալերի սեռ, Սոթ և այլն:

Շատ աշխատասեր կին էր Թումանյանի մայրը: Սիրում էր և՛ դաշտի, և՛ սարի աշխատանքը: Տան հոգսերով ծանրաբեռնված, հաշվով ապրող կին էր:

Նա տանը շարունակ խոսում էր, կը ու-
վում, որ առավոտը վաղ վեր կենան,
աշխատանքի գնան, խնայողությամբ
ապրեն։ Առավոտից իրիկուն տանը ազ-
մուկ՝ էր լինում ու կռիվ։ Հենց որ նա
խոսում էր ու սկսում էր կռվել, տեր-
տերն ասում էր. «Ե՞րբ պիտի գարուն-
քանա, որ սրան սարը դարկենք, մենք էլ
հանգիստ ապրենք»։ Իսկ երբ նա սարն
էր գնում, տանը հարսանիք էր. ուշ էին
վեր կենում, հանգիստ էին աշխատում,
միրդն էլ առատ էր լինում»։— Այսպես
էր պատմում Թումանյանի եղբայրներից
մեկը։

Նա ութ երեխա ուներ՝ հինգ տղա և
երեք աղջիկ։ Ամենամեծը Թումանյանն
էր, և ամենից շատ սիրվածն ու փայ-
փայվածը նա էր։ Մայրը, բացի սարի
ու կաշտի աշխատանքից, այդ բաղման-
դամ ընտանիքի մանվածքն ու գործ-
վածքն էլ էր անում։ «Յերեկը ապրանքն
էի պահում, գուլպան ձեռիս գործելով,

գիշերը թել էի մանում՝ չուխա, խալի
գործում», ասում էր մայրը:

Նա իր ճախարակի առաջ նստած՝
գիշերները թել էր մանում, հետն էլ երդ
ասում: Իր ութ երեխային այդպես է
պահել, մեծացրել: Երգել է տիտուր եր-
գեր՝ արևելյան եղանակներ, ժամանակի
տարածված ժողովրդական և Հայրենա-
սիրական երգերից, ինչպես «Է՞ր հեռա-
նաս քո մայրենի աշխարհից...», «Մա-
նի՛ր, մանի՛ր իմ ճախարակ», «Ազնիվ
ընկեր», և այլն:

Լինելով զրույց սիրող և յավ պատ-
մող կին՝ նա իր երեխաներին Հին-Հին
զրույցներ էր պատմում իրենց տան մե-
ծերից— Օվագիմ Յուզրաշուց և նրա
քաջագործություններից: Լեզենդներ ու
Հեքյաթներ էր պատմում առակների հետ
միասին, Համեմած ժողովրդական ոճով
ու դարձմածքներով: Պատմում էր Հա-
սան խանի օրերից, ինչպես Լոռիա գյու-
ղերի բնակչությունն այդ ժամանակները
գյուղերից փախած՝ ահ ու սորսափի

մեջ պատսպարվել է այրերում։ Պատ-
մում էր Օհաննես աղայից ու նրա յոթ
եղբայրներից, անցած ժամանակներից
և իր ջահել օրերից։ Նա Հարսն է եղել
նահապետական մեծ ընտանիքում՝ 40—
50 հոգուց բաղկացած մեծ զերդաստա-
նով։ Ավելի բազմանդամ է եղել ընտա-
նիքը՝ նրա սկեսրոջ ժամանակ։ Երբ թու-
մանյանի տատը Հարս է գալիս տուն,
տանը 60 մարդ են լինում, ութը ծեր,
սպիտակ միրուքավորներ, և չի իմա-
նում, թե ո՞րն է մեծը, որ առաջ նրան
ծառայեր։

ԱՆՀՈՒ ԵԶԱՐԱԾԸ

Թումանյանը ընտանիքի անդրանիկ
երեխան էր, և տանը փոքր հասակից
շատ են սիրել նրան։ Մայրն ասում էր.
«Գիշեր-ցերեկ ձեռներիս ենք պահել ես
ու իմ սկեսուրը։ Օբորոց չենք դրել, ոչ
էլ ճոճի մեջ դրել, որ միտքը պայծառ

մնա, չօրորվի»։ Լավ են պահել, բայց
ինքը շատ լացկան երեխա է եղել։ Պատ-
մում են, թե՝ իրիկնազեմից մինչև լու-
սադեմ լաց էր լինում։ Հայրը երբեմն
բարկանում էր, որ քնի, լաց ըլինի։
Բայց ոչինչ չէր օդնում, տատն էր՝ իր
հոր մայրը, որը թոռանը պահում էր,
պաշտպանում։ Գիշերները միրգ էր տա-
լիս, ընկույզ և չամիչ ղնում բարձի
տակ, լաց լինելիս տալիս էր նրան։

Տատերը շատ են սիրել իրենց թոռա-
նը. ավելի շատ՝ հոր կողմի տատը։ Այդ
տատը գեղեցիկ ով կիրթ կին էր. չէր
սիրում գյուղի ու աշխատանքը։ Նա սի-
րում էր ավելի քաղաքը և քաղաքի կյան-
քը։ Լինելով քաղաքակրթված և կուր-
տուրական կին՝ նա է հետեւ թոռան
կրթությանը, նրա հագնվելուն, շարժ ու
ձեխն, պահանջելով, որ ամեն ինչ լինի
մաքուր, կիրթ և ճաշակով։ Թոռանը
շատ սիրելուց նրա անունը գրել էր իր
ամուսնու անունը՝ Օհաննես աղա։ Եվ

այդպես էլ անվանում էին Թումանյանին
գյուղում՝ Օհաննես աղա:

Թումանյանին պակաս չափով չի սի-
րել և մյուս տատը՝ մոր մայրը։ Իր ման-
կությունը հիշելիս, Թումանյանն ասում
էր. Երկու տատիս ծոցումն եմ մեծա-
ցել։

Տատի տունը գտնվում էր գյուղի
մյուս ծայրին։ Տատը թխվածքներ էր
թխում, սարի ազդակ*) ու սեր էր ու-
տեցնում թոռանը, միրգ էր տալիս,
սիրում, գուրգուրում, ամառներն էլ իր
հետ սարն էր տանում նրան։ Սարերում
նա իր հասակակից երեխաների հետ գառ-
ներն էր պահում, արածացնում։

Փոքրիկ Հովհաննեսը թեև նիհար,
բայց շատ առողջ, ժիր, աշխույժ և չա-
րաճճի երեխա է եղել։ Կարմիր արխա-
րուղը հաղին, մորթե փափախը գլխին,
ոտքին տրեխներ, ճիպոտը ձեռին, իր
հասակակիցների հետ շարունակ ձորե-

*.) Աերուցքից պատրաստված թխվածք

րում, հանդերում խաղացել է, վագվը-
զել, թափառել;

Յոթութ տարեկան հասակում նա
և զնարած էր, բայց եզները միշտ կորց-
նում էր: Իրենց անասունները տանում
էր հանդը, բայց թողնում, ինքը հեռա-
նում մի քարի գլխի նստում, կամ ծառի
տակ պառկում և անձնատուր լինում իր
ցնորքներին: Ժամերով նայում էր վեր-
ջալույսի վարդագույն ամպերին, հետե-
գում էր Չաթինդաղի գագաթի ամպերի
խաղերին, նրանց սահուն ու դանդաղ
ընթացքին և երազում... Լում էր թըռ-
չունների ծլվյոցը, ծղրիդներին, ար-
տուտների արտորումը արտերում: Պառ-
կում էր ձորափին, լում Դեբեդի վըշ-
չոցը:

Նա, ներշնչիած բնության գեղեց-
կություններով, մոռանում էր ամեն
ինչ, մնում էր իր մտքերի հետ, իսկ ա-
նասուններն արածելով՝ հեռանում էին
իրենց հոկողից ու կորչում...

Նա շատ էր սիրում բնությոն իսո-

ղաղ ժամերը, լսությունը՝ մենությամբ
մեջ: Հոռու հանդերում կամ բլուրների
վրա, պառկում էր, խորասուզվում եր-
կընքի մեջ: Լեռնային բուրումնալի զով
ու կազզուրիչ օդում, կանաչ, ծաղկավետ
խոտերի մեջ հետեւում էր արծիվների
թռիչքին ու լսում նրանց ծղրտոցը,
կամ զմայլվում թիթեռներով, որոնք
ծաղկից ծաղիկ թռչելով, ստեղծում էին
դույների խաղ: Պատանի բանաստեղծը՝
տարված իր ցնորֆներին՝ մոռանում էր
իր հովվական պարտականությունը:

Ծատ ուշ, երբ մութն ընկնում էր,
սթափվում էր նա իր երազներից, հիշում
իր եզները և դատարկ վազում՝ տուն:
Տանը երազկոտ փոքրիկ եզնարածին
խիստ հանդիմանում էին այդ բանի. հա-
մար, երբեմն նույնիսկ ծեծում: Թու-
մանյանի մայրը իր տղային ծեծից ա-
զատելու համար տանում էր հարեամնե-
րի տանը պահում: Հարեամների տանն էլ
հանգիստ չէր մնում եզնարածը: Թուման-
յանը հիշում էր երկու դեպք: Մի անգամ

մայրը տանում, պահում է նրան Աթի
բիծու տանը: Թումանյանն օջախի մոտ,
թասի մեջ տեսնելով հանդվորի համար
պահված քաշովին՝ ուտում է, դատարկ
ամանը ծածկում ու գնում իր տեղը: Մի
ուրիշ անգամ մայրը տանում է Բալոյի
տունը, այստեղ էլ նրանց օջախի մոխ-
րի մեջ թաղված խորոված վետնախնձորն
է ուտում և ուշ երեկոյան կուշտ գալիս է
տուն:

Փոքրիկ Հովհաննեսը թեև վատ եղ-
նարած էր, բայց շատ էր սիրում եղնե-
րին և առհասարակ ողջ կենդանական
աշխարհը: Իր կենսագրական նյութերի
մեջ թումանյանն առանձին սիրով ու կա-
րոտով է հիշում իրենց և իր պապոնց
տան կենդանիներին:

«Իբրև հին կարոտ մտերիմների, հի-
շում եմ պողատ գոմեցլ՝ Նազլուն, Ծա-
ղիկը (կովի անուն), Զերքեղը, Աբրաչը
(եղներ), Թորյան շունը, Ղայթարը (շան
անուն) իմ պապոնց, մեր Մարինոս էշը,
Ղուաթ ձին, մեր ու Մաշկոն. (շուն)»:

իսկ հետագայում, երբ գրում է կենդանիների կյանքից իր հայտնի պատմվածքները, նա առանձին ջերմությամբ ու մտերմությամբ է խոսում կենդանիների և թռչունների մասին՝ եղնիկի, ծիծեռնակի, շան և այլն, համեմատելով նրանց մարդու հետ. «...Ի՞նչ ա մեր ու էն սարի, պախրի զանազանությունը—ոչինչ... ամենի սիրտն էլ սիրտ ա, ամենի ցավն էլ ցավ...»,— գրում է նա:

ԽԱՂԵՐԻ ՈՒ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գյուղի մայրերից Թումանյանն ամենից շատ Դիղն էր հիշում ու սիրում:
Դիղը գյուղի հյուսիսարևելյան կողմում, հարթավայրի կենտրոնում՝ քարոտ կատարով բլուր է։ Հնում, հարձակումների ժամանակ, դիտարան է եղել, հետո դարձել է ուխտատեղի, այժմ

եկվորների համար զբոսավայր է։ Բլրի
կատարին մի հին ժամառու է կառուց-
ված, ինկ չորս կողմը տարածվում են
գյուղի արտերը։ Դըդի կատարից երե-
վում է Դսեղն իր շրջակայքով ու սահ-
մաններով։

Դըդի վրա ամառը միշտ հով է, օդը
դուրեկան և բուրումնալի։ Այնուեղ
միշտ քամին խաղում է ազատ……

Դըդի կատարին բուսնում է ուղ և
անանուխ, ստորոտին՝ բազմազան բու-
րավետ ծաղիկներ։ օդում ճախրում են
արտուսները, թիթեռները թռչում են
ծաղկից ծաղիկ ու կենդանացնում շրջա-
պատի ամբողջ հարթավայրը։

Աշնանը՝ յուռ է, տխուր և թախծա-
լի— ծաղիկներն ու խոտերը թոշնած են,
դեղնած…… թռչունները՝ չված, հեռա-
ցած……

Առաջ, թռւմանյանի մանկության
տարիներին, Դըդի ստորոտին աղբյուր-
ներ են եղել, որոնք հիմա չկան Մնացել
է մի մեծ կարմիր քար, որի տակ, ինչ-

պես ինքը թումանյանն էր տսում, անձրև
ժամանակ թաքնվել է ինքը՝ անհոգ
փոքրիկ եղնարածը: Մինչև հիմա էլ մը-
նում է այդ քարը:

Դըդի ետևը, ձորի մյուս ափին որ-
պես Փոն, երկարությամբ ձգվում է Զա-
թինդաղ յեռնաշղթան, որի դադաթը-
գարուն և ամառ ծածկված է թխպով.
այդ այն յեռնաշղթան է, որի վրայով

...Ամպերը դանդաղ ուղտերի նըման

նոր են ջուր խըմած ձորից բարձրանում...

Զաթինդաղի վրայով քարավանի
նման ամպերը միշտ սահում են, զնում և
դեղեցիկ խաղեր ստեղծում:

Դըդի ստորոտին, գյուղի հակառակ
կողմը, ձորափին՝ կանգնած է Սիրուն
Խաչ դեղեցիկ խաչքարը, որ

...Քարի գլխից, լուռ մարդու նման,
նայում է ձորին....,

այն ձորին, որտեղ գտնվում է Բարձրա-

«Ծովերը»
(1938 թ. լուսանկարից)



քաշ Ս. Գրիգորի վանքը, 12-րդ դարի
գեղեցիկ հուշարձաններից մեկը։ Այդ
վանքին մոտիկ կա մի վճիտ ու սառն
աղբյուր։ Այդ աղբյուրը և ձորը թու-
անյանի սիրած վայրերից են եղել՝ ինչ-
պես մանկության օրերին, այնպես էլ
հետագա իր կյանքի ընթացքում։

Ինչպես տեսնում ենք, թումանյանի
մանկության և պատանեկության շրջանի
վայրերը հարուստ են եղել պատմական
հուշարձաններով, որոնք մեծ ազդեցու-
թյուն են արել թումանյանի վրա։ Հին
դարերի այդ հուշարձանները առանձին
գեղեցկություն և հմայք են տվել Լոռվա-
բնությանը և Լոռին դարձրել այցելունե-
րի սիրած վայրերից մեկը։

Թումանյանը շատ է սիրել այդ վայ-
րերը, և տանից ու դաշտի աշխատանքից
փախած՝ թափառել է գյուղի մի ծայ-
րից մյուսը։

Իր դասընկերներից մեկը՝ Գաբրի-
ձեն, (որ գյուղի կոլեկտիվի խոզարածն
էր), պատմում էր իրենց մանկության

զրջանի օրերից ու սիրած վայրերից,
ուր խաղացել են միտոին:

«Հինգ-վեց տարեկան էրեխեք էինք.
անբան էրեխեք. էն ա հանդն էինք զը-
նում, խաղ անում: Օհաննեսն էլ չատ էր
սիրում. տանից փախած սաղ օրը ման
էինք գալիս: Գնում էինք Դըդի ուսը.
ապրանքը հետ էինք ածում, թռցնում:
ինտեղից զեղի մյուս ծերն էինք վա-
զում՝ կաթնաղբյուրն ու Առվյակը: Աղբ-
րի մոտ հաց էինք ուտում, կամ թե չէ
ծովերն էինք գնում՝ մոռ, մոշ ուտելու,
ծտի բուն ման գալու, ձու հավաքե-
լու...»

Աշնանը խմբով զնում էին հավաքե-
լու վայրի տանձ ու խնձոր և զանազան
պտուղներ՝ հոն, կաղին, աճար, որոնցով
հարուստ են Լոռվա ձորերը:

Շատ են սիրել խաղալ Ս. Գրիգորի
վանքի և նրա աղբյուրի մոտ: Այնուհե-
տև իջել են Ձաղի ձորը, այնտեղ, որտեղ
հիմա Թումանյանի անվան հրակայուն
հանքերն են: Ձաղի ձորը Լոռվա խիտ,

կուսական և հարուստ ձորերից էր։ Այդ
ձորում Դերեղում լողացել են, խաղա-
ցել, ձուկ բռնել։ Այսպիս էր պատմում
Գարո բիծեն իրենց մանկությունից։

Ծովերը, որ գյուղի գեղեցիկ ան-
կյուններից մեկն է, պտնվում է գյուղից
երեսւերեք կիլոմետր հեռավորության
վրա, անտառի մեջ եղեղնուտով շրջատ-
պատված փոքրիկ լիճ է։ Կոչվում է
նաև՝ Տըզրուկագոլ, որովհետեւ լիճը
լիքն է տղրուկով։ «Ծովերը» առաջ եր-
կու մեծ և փոքր լճից է կազմված եղել,
այժմ փոքրը ցամաքել է և մնացել է
միայն մեկը։ Գյուղացիները այդ երկու
լճին ասում էին՝ Ծովեր։

Շնորհիվ իր այդ թափառումների՝
թումանյանը մանկուց արդեն լավ էր
ճանաչում գյուղի, նրա շրջակայքի ու
նրա սարերի հուշարձանները, մութ ծր-
մակներն ու թալաները։ Նրան ծանոթ էր
ամեն քար ով ծառ, ամեն այր ու վանք,
խաչքար և քարանձավ։

Նու դիտեր բուսական աշխարհը,

վայրի բույսերի, ծաղիկների բուժիչ
հատկություններն ու անունները, նա գի-
տեր բանջարեղենների զանազան տեսակնե-
րը արմատեղենների անունները՝ ինչպես
շուշան, կոճղեղ, ճանդուկ, ավլուկ,
երիցուկ, ուրց, և այլն և այլն:

Մանուկ Հովհաննեսի մեջ սերը դե-
պի բնությունը, դեպի խաղերն ու թա-
փառումներն ավելի ուժեղ է եղել. նա
միշտ նախընտրել է բնության մեջ ազատ
կյանքն ու երազանքը, կամ իր ընկերնե-
րի հետ խաղերն ու ազատ ժամանցը:

Թումանյանի մանկության օրերի
արկածներից հայտնի է՝ «Զերքեղի պո-
ղի» պատմությունը, որ ինքը թուման-
յանը պատմում էր հետազայում:

Մի ամառվա շոգ օր, կալի ժամա-
նակ Թումանյանի հայրը եղները կալն է
անում լծելու: Հենց այդ ժամանակ
դյուղացիները գալիս են հորը դյուղամեջ
կանչում: Ամառվա շոգ օր, եղներն ոկր-
սում են այս ու այն կողմ փախչել. Հով-
հաննեսը քարը դցում է, քարը կալիս է

դիպչում Զերքեղի պողին, պողը դուրս է
ընկնում. Հովհաննեսը իսկույն վազում
է, պողը նորից իր տեղը դնում: Քիչ
հետո հայրը գալիս է, ուզում է եղները
լծել: Զերքեղը ցավից մոտ չի թողնում,
որ ականջը բռնի: Հայրը միամիտ պո-
ղիցն է բռնում, պողը մնում է ձեռին,
իսկ եղը փախչում է: Տերտերը հասկա-
նում է, որ այս իր տղայի գործն է,
բարկանում է, պողը շպրտում է տղայի
կողմը, թէ դու ինձ համար տուն չես
շինի: Հովհաննեսը թողնում է կալը,
փախչում է Դրդի կողմերը՝ իր սիրած
փայրերը...

Թումանյանը սիրել է կալի աշխա-
տանքի հանգստի ժամերը: Այդ է պատ-
ճառը, որ նա ամենից շատ սիրում էր
կալի դագեն և մոտի դեղերը: Ցերեկը
պառկում, էր ստվերում, իսկ ուշ երեկո-
յան բաց երկնքի տակ ու այնտեղ մտո-
րում էր, երազում... այնտեղ է գրել իր
մի շարք իիրեկ բանաստեղծությունները,

ինչպես՝ «ի՞յ աստղեր, աստղեր, Երկնքի
աչքեր»... և այլն:

Լինելով անհանդիսաւ և չարածնի ե-
րեխա, մանկական զանազան չարություն-
ներ է արել: Մայրը պատմում էր, թե
4—5 տարեկան հասակում, երբ տանը
մենակ է լինում, վերցնում է նոր
դուրս եկած դեղին փոքրիկ ճուտերին,
տաս-տասնհինգ հատ գցում է ջրով լիքը
տաշտակը ու սկսում է լողացնել... հե-
տո հանում է, շարում գերանների վրա,
«քնեցնում»... մայրը երբ տուն է գա-
լիս, ցույց է տալիս «քնած» ճուտերին,
որոնք բոլորը սատկած են լինում ար-
դեն:

Բացի նման արկածներից և գյուղի
ըրջակայքում կատարած թափառումնե-
րից, թումանյանը սիրում էր նաև խա-
ղաղ զրույցը և հեքիաթները՝ իր ընկեր-
ների կամ մեծերի ըրջանում: Սիրում էր
սարերում, ձորերում զրույցի նստել
գյուղի մեծերի հետ ու յսել նրանց: Սի-
րում էր գյուղացու իենդանի խոսքը,

Նրան շվեն, նրա սայլի ու կալի երգը:
ինչպես ասում են՝ Թումանյանի ականջը
ժողովրդի լեզվին էր: Շարունակ գյու-
ղումն էր, գուրսը՝ իր խաղընկերի
հետ, կամ գյուղամիջում՝ գյուղացիների
շրջանում: Գիշերները հաճախ իր խաղ-
ընկերների հետ մնում էր գուրսը՝ հան-
դերում կամ ձորում:

Թումանյանն առանձին քաղցրու-
թյամբ էր հիշում գյուղում անցկացրած
այդ օրերը: Իր պատմվածքներից մեկը՝
«Փմ ընկեր Նեսոն», որի մեջ Թումանյա-
նի կենսագրությունից շատ բան կա,
հենց այդ օրերին նկարագրությամբ էլ
սկսվում է:

«Մի խումբ ընկեր երեխաներ էինք:
Գյուղացի երեխաներ:

Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ
դաստիարակություն, ազատ էինք միան-
դամայն ու խաղում էինք. ի՞նչքան էինք
խաղում: Ու ո՞նց էինք իրար սիրում,
ո՞նց էինք իրար սովորել: Սոված ժա-
մանակներս էին վաղում էինք, հացի

տաշտիցը մի կտոր հաց առնում, պանրի
կարասիցը մի կտոր պանիր, ու էլ ետ
շտապում իրար մոտ: Իրիկուններն էլ
հավաքվում էինք, ծիծաղ բաներ ասում
կամ հեքիաթ պատմում:

Մի ընկեր ունեինք, անունը՝ Նեսո:
Է՞նքան հեքյաթ գիտեր, է՞նքան հեքյաթ
գիտեր, որ ոչ ծեր ուներ, ոչ տուտը:

Ամառվա յուսնյակ դիշերները մեր
դուան գերանների վրա շուրջբոլոր նստո-
տում էինք, հիացած պլըշում Նեսոյի՝
ոգևորությունից գեղեցկացած դեմքին:
Ու պատմում էր նա հուրի փերիներից,
Զմրուխտ դուշից, Լիս ու Մութ աշխար-
հից...»

Մանկության տարիներին իր ընկեր
Նեսոյից լսած հեքիաթներից շատերը
Թումանյանն անգիր գիտեր:

Իր տան մեծերից ու քեռիներից
լսում է լեզենդներ, զբույցներ և զանա-
զան պատմություններ:

Նա սիրով ու կարոտով էր հիշում

այն օրերն ու դիշերները, երբ էր հարա-
զատների շրջանում լսել է նրանց զրույ-
ցը:

...Ուր որ հայրենի օջախի առաջ,
...Զմրան երկար դիշերը նըստած՝
իսոսում են Լոռու հին-հին
քաջերից...

Նա սիրով էր հիշում աշնան այն օ-
րերը, երբ քեռիները սարից ձիով տուն
դառնայիս՝ ճանապարհին առակ ու լե-
գենդ էին պատմում: Նա հիշում էր քե-
ռի իսայուն, որ նրան պատմել է՝
«Շուն ու կատուն» զրույցը, «Արծիվն
ու կաղնին», «Անբախտ վաճառականնե-
րը» և մյուսները:

Հետագայում, երբ սկսում է գրել,
թումանյանն առատությամբ է օգտվում
մանկության օրերին գյուղում լսած այդ
ժողովրդական նյութերից՝ հեքիաթնե-
րից և լեզենդներից:

Հեքյաթների ու լեզենդների հետ
միասին, թումանյանը սիրում էր սարի

շվին։ Սիրում էր սայլորդի երգը, կալի
երդը։ Գյուղում՝ հանդերում, իսկ սա-
րերում՝ գաղանների առաջ, նա պառկում
էր «թա՛րմ», ցողապատ լեռների լան-
ջում»—ժամերով լսում հովիվների սրին-
դը, նրանց կանչը, նվազն ու բայաթին։

Սրինդ ածողներին և առակ պատ-
մողներին թումանյանը միշտ հիշում էր։
Հետագայում, երբ Թիֆլիզից գյուղն էր
գնում, իր սերտ բարեկամությունը պահ-
պանում էր նրանց հետ, հրավիրում էր
իր տուն, հյուրասիրում, նվերներ տա-
լիս՝ դիրք, ծխախոտ, արխալուղ կամ
ուղղակի դրամ։

Շվի ածողներից Դսեղում այն ժա-
մանակ հայտնի էին՝ քեռի Եզեկը, հո-
վիվ Ակոփը, Ղշի Միխակը և մյուսները։
Առակ ասողներից՝ Մելքոնանց Օհաննես
ապին։ Մի ծեր, չքավոր բոստանչի էր
նա, որ մշտապես ապրում էր Զաղի ձո-
րում։ ամառները բանջարեղեն էր մշա-
կում ու դրանով ապրում։

Ահա այդ Օհաննես ապնի դափումն

է հաճախ գիշերները մնացել թուման-
յանը, նրա հետ եղնիկի որսի գնացել,
կրակի կողքին նստած զրուց արել որ-
սից ու կենդանիների կյանքից :

ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

Հեքյաթների ու խաղերի աշխարհից
դուրս՝ թումանյանը մի ուրիշ ավելի
մեծ աշխարհ ուներ, որին կապված էր
վաղ մանկուց: Նրա գիրկն էր գնում
միշտ, նրանից շատ բան էր ստացել,
շատ բան սովորել: Այդ աշխարհը—բնու-
թյունն էր: Բնությունը թումանյանի
ներչնչարանն էր: Սիրում էր Լոռու
վայրի բնության բազմերանգ երևույթ-
ները, նրա ճոխ տեսարանները, նրա
«վես ու վիթխարի լեռները», որոնք
հարբած շարքերով շուրջպար էին բռնել.
սիրում էր սաղարթախիտ կուսական
տնտառները, թափուտ ծմակները, մամ-
ոռտ ժայռերը: Սիրում էր նրա սառն ու

Հստակ աղքյուրները, բնության բոլոր
գույները, ձայները...

Նա հաճախ է առանձնացել բնու-
թյան դրկում ազատ ապրելու, նրա հետ
ձուլվելու, նրանով շնչելու: Սիրել է
թափառել Լոռու անտառներում մեն-մե-
նակ, իր ցնորժների հետ, կամ մարդերի
լոռության մեջ լսել թուչունների ծլվլոցն
ու արտերի սրվարվոցը... Իսկ հեռվից
ձորափից լսվում էր՝ ձորերի թըշըցը,
սարերի գըվգըվոցը...

Լոռու հանդերն ու արտերը առանձ-
նապես սիրուն ու կենդանի են գարնան
օրերին, երբ ծաղկի ու կանաչի բացվե-
լու հետ միասին սկսում են երգել ծղրիդ-
ները, ճախրել արծիվները, ացուերի
մեջ՝ «արտորել» ու «կլթացնել» ար-
տուտները:

Իր կյանքի հասուն շրջանում նա
հիշում էր Լոռու հանդի արտուտները...
վերհիշում իր մանկությունը, վերադ-
րում ու կարոտում...

Կըլթացնում են, արտորում,
Արտուտները արտերում,—
Թըռչում մանուկ հոգուս հետ,
Ճախրում, ճըխում եթերում:

Նա հիշում էր իր հայրենի անտառ-
ները՝ գարնան բացված լորենիները, աշ-
նան դեղին ու կարմիր կաղնի և աճարի
շքեղ ծառերը—հիշում էր, տիսրո՞ւմ...
կարոտո՞ւմ...:

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ,
Հեռվից անթիվ ձեռքերով,
— Զա՞ն, հայրենի անտառներ,
Դուք եք կանչում ինձ ձեր քով:

Բնության կարոտը թախիծ էր բե-
րում նրան: Առանձին խորությամբ է
հիշում նա իր հայրենի ամպամած լեռ-
ները, միշտ ողեռվում նրանցով ու կա-
րոտով նրանց գիրկը թռչում:

Նա հիշում էր խոր, լայնաթերան
ծաղկուտ ձորերը, հիշում էր բուրումնա-
լի հանդերն ու արտերը:

Իր պատմվածքներից՝ «Ծղրիդ»-ում
զգացվում է թումանյանի այդ խորը և
մեծ կարուր, մանկության օրերի վեր-
ապրումն ու վերհիշումը: «Ծղրիդ»-ում
այսպես է նկարագրում Լոռու հանդի-
վաղ դարունը:

«...Լսե՞լ եք էն թախծալի ճըռոո-
ցը, որ ծաղկի բուրմունքի ու կանաչի
թարմության հետ խառնված հոսում է
գարնան դաշտերի երեսով:

Իհարկե լսել եք, և ի՞նչքան եք լսել:
Դեռ ո՞վ գիտի, գուցե էլ ժամանակ մի
ծառի կամ թփի տակ էլ պառկած խո-
րասուզվել եք ջինջ կապույտ երկնքի
խորության մեջ, մաքուր թեթև երազ-
ների մեջ, իսկ չորս կողմերդ ծավալ-
իլում է համատարած ճըռո՞ո՞...
ճըռո՞ո՞...

Հանդի կամ դաշտի ծղրիդն է իր ան-
թիվ ու անհամար ընկերներով:

Կամ գուցե հիշո՞ւմ եք էն մելամաղ-
ձոտ ճըռոոցը, որ ամառվան իրիկուննե-
րը մենակ ու միալար հնչում է գյուղա-

կան խաղաղ տան մի որեւէ անկյունից :
Եվ ի՞նչ գուրեկան թախիծ է բեր-
վում մարդու հոգուն, ի՞նչ խաղաղու-
թյուն, մանկության օրերից, մանկու-
թյան իրիկուններից, նրանից էլ կար-
ծես դենք՝ հեռավոր ու անորոշ հիշո-
ղություններ . . . »

Ինքն է այստեղ, թումանյանը՝ իր
մանկության օրերին, ընության գրկում,
մանկության հիշողությունների քաղց-
րության հետ միասին :

Ամառները, երբ Թիֆլիսից դյուզն
էր գնում, հաճախ էր բարձրանում
Դիղը՝ զբոսնելու. պառկում էր նա ըս-
տորոտին ու նայում մոտակա արտե-
րին, հեռավոր անտառապատ սարերին և
մտքով գնում՝ լոռում անցկացրած իր
մանուկ օրերին, երազանքներին, ար-
կածներին ու խաղերին :

«Հե՛յ գիտի հա՛ . . . ի՞նչ օրեր եմ
անցկացրել փոքր ժամանակս էստեղ :
Երեխեքով հավաքվում էինք Դըղի դու-
շը՝ ուրց էինք քաղում, հասկերից

պկու*) շինում, մեջքներիս վրա պառ-
կում էինք ու ածում... ի՞նչ լավ էր...

Էս միջակներում ի՞նչքան մորի եմ
հավաքել, ծմակներում կխտարի որս
արել...»

Նա հիշում էր իր խաղերը, իր ար-
կածները, իր կայտառ, կենդանի լավ
օրերը, որ անց էր կացրել այնտեղ:

— Ին ի՞նչ բան էր, մարդ որ հիշում
է... շատ էի խաղում, վազում, վազվը-
զում, ի՞նչքան էի չար ու չարաճճի, ինչ
օյին ասես չէի սարքում... է...
է...»

Իր կյանքի վերջին օրերին, 1923
թվի մարտին, Մոսկվայում, մի անդամ
էլ մեծ կարոտով հիշեց Դիդը.

«Շատ էի ուզում, որ Դրդի ուսին
լինեմ. էնդեղ եմ անցկացրել երեխա ժա-
մանակիս լավ օրերը... շատ եմ խաղա-
ցել էնտեղ, շատ...»

*) Պկու—սրնդի նման նվազածության զործիք է
հասկի ցողունից կամ եղեգնից պատրաստած:

Մանուկ Թումանյանի վրա ավելի
ուժեղ և խորր տպավորություն է արել
Դեբեդ գետը իր վըշչոցով ու իր ձորով:

Դեբեդի ձորն ու նրա վըշչոցը հա-
ճախ է պատահում ու բացվում բանա-
ստեղծի պոեմներում և պատմվածքնե-
րում:

Դեբեդը մասնակից է պոետի և իր
Երկերի հերոսների ապրումներին: Դեբե-
դը ոգիացած է, չնչավորված: Նա մերթ
որդում է ու հեծեծում, ծեր նանի հետ
խավար անդունդում, մերթ հուզված:
Խլածայն ողբով սողում դեպի ցած, կամ
տիսուր շարական երգում, իսկ ավելի հա-
ճախ՝ մռնչում է մենակ, խոր ու մութ
ձորերում...

Բանաստեղծի ականջը Դեբեդի ձայ-
նին է, Դեբեդի հետ է:

Իր կենսագրական նյութերի մեջ
Թումանյանը գրում է.

«Իմ մեծ ուսուցիչն է Եղել Դեբեդի
վըշչոցը՝ գիշերները լոռվթյան մեջ միշտ
ականջ էի դնում Դեբեդի ձենին, երբեմն

խույ ու խոր, երբեմն սլարդ ու ահավոր:
Եվ կարծես խոսում էր հոգուս հետ...»

Այո՛, կենդանի, շնչավորված արաւ
րած է Դերեղը թումանյանի համար:
Նա երբե՛ք, երբե՛ք չէր մոռանում Դերե-
ղի վշշոցը, նրա ժեռուտ, քարքարոտ ա-
փերը, նրա խիտ, անտառապատ ձորերը,
չքեղ և գունագեղ ծաղիկները, որ բուս-
նում էին նրա ավերին... հարազատ էր
ու թանգ Դերեղը բանաստեղծի հոգուն:

Դերեղի վշշոցը գյուղում գիշերա-
յին խաղաղության մեջ ավելի լավ է
լսվում, ավելի տպավորիչ է ու խորհր-
դավոր, քան ցերեկը: Ցերեկները գետը
երեսում է գյուղի ձորափի ժայռերի
գլխից, այդտեղից ամբողջ ձորն է բաց-
վում՝ խոր, լայնաբերան. անդնդում,
ձորի միջով օձապտույտ և կատաղի հո-
սում է Դերեղը, նրան զուգահեռ անց-
նում է երկաթուղին:

Դերեղի ձորը բանաստեղծի սիրած
վայրն էր, որ գյուղի ամենամոտ ձորն

է, գտնվում է հենց Դսեղ Շյուլի
տակը և կոչվում է՝ «Տան տակի ձոր»:

Այդ այն ձորն է, որի նկարագրու-
թյունով է սկսում Թումանյանն իր «Լո-
ռեցի Սաքոն»:

«Էն կոռու ձորն է, որ հանդիպակաց
ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ...»

Դեբեդի այդ ձորն այն ժամանակ ա-
ռանձնապես հարուստ է եղել հաստա-
րուն, գարավոր կաղնիներով, ընկուզե-
նիներով, պտղառու այլ ծառերով և
խաղողի այդիներով:

Այդ ձորումն է եղել բանաստեղծի
պապերի ընկուզենու հին այգին ու ջա-
ղացր:

Երբ 1898 թվին կառուցվում է
թիֆլիս-Ղարս երկաթուղարիծը, Դեբե-
դի ձորի հարուստ կուսական անտառը և
ընկուզենու այգին ոչնչացնում են:
Կտրվում են հարյուրավոր հաստաբուն

ընկուղենիներ, հաղաքավոր դալար ծառեր։ Երկաթգծի մոտ պահպանվել է ու մնացել կանգնած այդ հաստաբուն ընկուղենիներից միայն մեկը, այն ընկուղենիներից մեկը, որի տակ աշակերտ Թումանյանը ներկա է եղել իր պապերի քեֆին և որի նկարագիրը տվել է իր «Հին օրհնություն» բանաստեղծության մեջ։

Կանաչ, վիթխարի ընկուղենու տակ,
իրենց հասակի կարգով ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շրջան կազմած,
Քեփ էին անում
Եվ ուրախանում
Մեր հսկա պապերն ու մեր հայրերը
Գյուղի տերերը...

Մինչև հիմա էլ Դեբեղի ձորում դեռ
մնում են այդ այգու հետքերը՝ խորը
թաղված գինու երկու մեծ կարաս, խա-
ղողի որթեր, և իր տատի սիրած թթի և
հոնի ծառերը։

Դեբեղի ձորումն է զտնվամ գյուղի
վճիտ ու սառն աղբյուրներից մեկը, որ-
տեղ փոքրիկ Հովհաննեսն իր խաղընկեր-
ների հետ ամառը հաճախ դնացել է լո-
ղանալու:

Ի՞նչ հաճելի և ուրախ ժամեր է
անցկացրել բանաստեղծը գիծ ու գեղե-
ցիկ Դեբեղի ափին իր ընկերների հետ-
քար է գցել՝ ձուկ բռնել, լողացել...
«Մարո» պոեմում տեսնում ենք այդ օրե-
րի հուշերը:

«...Էն առվակում կես օրին,
Երբ որ շոգից նեղանում:
Գնում էինք լողանում:
Տըկլոր աշխույժ խըմբերով,
Աղաղակով, աղմուկով
Խաղում էինք, վազվզում
Գույն-գույն մանրիկ ավազում:
Կամ հետևում հկ ի հկ
Թիթեռնիկին ոսկեթև...»

Այս հեշտ ու թեթև, ուրախ ժամերի
հետ բանաստեղծն ունեցել է և տիսուր

ժամեր: Զորում, դետափին, նա դափա-
ներում*) հանդիպել է չքավոր ու կարի-
քավոր գյուղացիներին— ցավակցել է
նրանց, նրանց ցավով ապրել, լսել նրանց
զրուցը՝ իրենց ծանր ու դժվարին կյան-
քից:

Նա գիշերներ է անցկացրել մութը
ձորերում, գյուղացիների շրջանում: Ա-
վելի ուշ, աշակերտական տարիներին,
այդ հեքյաթային գիշերների մասին
ինքը հիշում էր ու պատմում:

«...Աշակերտ վախտո էր. Ղոխնանց
Պապը մեր ձորումը գիշերները կրակի
զրադին չիրուիս էր սարքում, հեքյաթ-
ներ ասում... Դեբեղը վրշում էր...
ձորերը թշում էին, ձեն տալիս, պախ-
րեն դռուում էր... Ղոխնաց Պապը պատ-
մում էր, մենք էլ լսում էինք... յավ
պատմող էր...»

*) Դափա—տաղափար, ձորերում, բանջարանոցնե-
րում ամառվա բնակելի տեղ. շինված է փայտից, վրան
թեր մանր տախտակներ ու ճյուղեր, հողածածկ. առաջը
երկու այռն և բաց:

Պատմականութեալ պատկեր (1938 թ.)



Այդ գիշերներն ու զբույցները,
գյուղացու պատմածները թումանյանը
հետագայում սլատկերել է «Հառաչանք»
պոեմում:

ՍԱՐԵԲՈՒՄ

Բնության գեղեցկությունն ու չքե-
ղությունը, գյուղի կյանքն ու կենցաղը
թումանյանն ավելի խորը կերպով զգա-
ցել է ու ապրել սարերում:

Սարը՝ նրա տարերքն էր։ Սարի սե-
րը վաղ էր զարթնել նրա մեջ ու մնացել
էր մինչև իր կյանքի վերջը։ Սիրում էր
սարը, սարի կյանքը, սարի արշալուն
ու վերջալույսը։

«Իմ կյանքի ամենալավ ու ամենա-
քաղցր օրերը սարերում եմ անցկա-
ցրել», — ասում էր թումանյանը, հիշե-
լով իր կյանքի շրջանները, որ անց էր
կացրել լոռում։

Իր մանկության շրջանի գարունները
թումանյանը սարերում է ապրել, թեր-

ևս դրա համար էր, որ ավելի գարուն-
ներն էր սիրում սարերում։ Սիրում էր,
երբ վաղ գարնանն սկսվում էր փոթոր-
կի, կայծակի, հեղեղի ու տարափի շըր-
ջանը, երբ ջրերը հորդանում էին, բնու-
թյունը զարթնում— սարերն ու ձորերը
կանաչ հագնում, մեկ թուխալ ու մշուշի
մեջ էին կորչում, մեկ բացվում, պայ-
ծառանում, շքեղ ու սիրուն տեսարան-
ներ կազմում, և այդ բոլորից հետո՝
բացվում էր սարի գարնան չքնաղ առա-
փութ— թա՛րմ, ցողապա՛տ ու բուրա-
վետ, հետն էլ բինաներում զարթնում էր
սարփորների կյանքը՝ աշխույժ, զվարթ
ու կենդանի։

Իր «Անուշ» պոեմայում թուման-
յանն առանձին կարոտով է վերապրում
սարի գեղեցիկ թարմ առափութ, առան-
ձին շքեղությամբ է նկարագրում ու եր-
գում բնության թովչանքն ուն հմայքը։

Ահա բացվեց թարմ առավոտ,
կարդ է թափում սարին, քարին,

Շաղ են ցողում ծաղիկ ու խոտ,
Շընչում բուրմունք եղեմային:

Ա՞յս, ի՞նչ հեշտ են սարի վրա,
Սահում ժամերն անուշ, անուշ...

Թումանյանի սրտին թանգ էր ու
հարազատ սարի կյանքի ամեն ձայն ու
աղաղակ, ամեն վայր ու տեսարան:
Հետադայում, երբ բանաստեղծ էր՝ ար-
դեն, նա կարոտով էր հիշում սարի
կյանքն, ու տիրությամբ դառնում այդ
անցած, գնացած օրերին.

...Եվ անձավներից քարաժայոերի,
Թավուտ անտառի լոին խորքերից,
Մանուկ հասակիս աղաղակների
Պարզ արձագանքը լսում եմ նորից:

...Եվ անքուն հովվի սաստող ազդարար
Աղաղակները ականջումս են դեռ:
Իսկ առավոտյան աղմուկը բինի,—
Հաջոց, բառաշոց, խրխինջ ու գոչյուն...
Այն աղմուկի մեջ կիսավայրինի



Գառնարած մեծի Նիկայը. Թումանյանի խաղընկերը
սարերում: (1933 թ. լուսանկարից)

Ինձ սիրելի է ամեն մի հնչումն
ես այն սարերումն էի երեխուց...

Այս տողերը կենսադրական շատ
նյութ են իրենց մեջ պարունակում:

Թումանյանը չէր կարողանում մոռ-
ոանալ սարերի հեքյաթային աստղալի
գիշերը, երբ սարվորները, իրենց օրվա
աշխատանքից հոգնած, հավաքվում են
վրանների առաջ և սկսում չվի ածել,
բայաթի կանչել, ողարել, իսկ մեծերը
սարքում են իրենց չիբուխներն ու սկը-
սում են պարզ լեռնական զրույցը՝ հա-
մեմած առակներով և պատկերավոր
դարձվածքներով։ Պատմություններ են
անում՝ սարերի կյանքից, անցած դեպքե-
րից, իրենց որսորդական արկածներից և
կենդանիների կյանքից։

Է՛... է՛... կրակ էինք անում,
չուրջը նստուտում, մինչև կես գիշեր
զրույց անում, հեքյաթ ասում, որը չիր-
խին էր զոռ տալիս, որը քնում էր...
քեռի Եղեկն էլ չվի էր ածում...»

Այսպես էր հիշում ու վերապրում
բանաստեղծը սարերում անց կացրած իր
գիշերները:

Սարերում սարվորները հաճախ
մութ գիշերներին ականատեղ են լինում
զանազան գեղքերի՝ աղջիկ փախցնելուն,
գողության «Հավարի», վրա տալուն,
հարա տարուն և այլն... ու խանգար-
վում է սարվորների գիշերվա խաղաղ
կյանքը:

«Մեկ էլ տեսար մի սարի ուսից տա-
րածվեց մի զի՛լ, առածդական ձայն.—
Հավար հե՛յ... Այդ գուժավոր ձայնը ձըգ-
վելով՝ տարածվում է լեռներում ու հան-
կարծ երկու կողմն էլ բինեքում իրարով
են անցնում...»

Սարերի հավարի գիշերների նկարա-
գիրը թումանյանը պատկերել է իր բա-
նաստեղծություններից մեկի մեջ, որը
հենց «Սարերում» վերնագիրն է կրում:
Բանաստեղծը նկարագրում է սարերում
տեսած իր այդ գիշերներից մեկը, անձ-

ըեվն ու տարափը, Հավարն ու աղաղակը: Բերում ենք այդ բանաստեղծությունից մեկ հատված:

«Մութը իշավ, գետինն առավ
Քոշաքարա սարերում,
Գագաթների տեսքը կորավ
Ու խոր թաղվեց խավարում:

Երկինքն ամպած տխուր ու սկ
Լաց է լինում միալար,
Հեռո՞ւ, հեռո՞ւ լեռան ետև
Խաղում փայլակն անդադար:

...Ամպը գոռաց ու տրաքեց,
Եվ անձրեզ սաստկացավ,
Հովհիվն—«Հե՞յ, հե՞յ...» աղաղակեց,
Շունը թևից վեր կացավ:

Հրացանները որոտացին,
Ոչխարն եղավ ցան ու ցիր,
Հավարն ընկավ, ողջ զարթնեցին...
Գիշերը մո՞ւթն, ակնակիր...*)

1891 թ. ապրիլի 25.

*) Ակնակիր—Հափազանց մութ, երբ ոչինչ չի երեսւմ:

Լոռվա սարերում, մանավանդ գար
նանը, կայծակ ու հեղեղ հաճախ են լի-
նում, լեռնային բնության ամենագեղեց-
իկ և ամենաշքեղ երևույթներից մեկն
է այդ: Թումանյանի մեջ սերը դեպի
կայծակն ու հեղեղը, դեպի որոտն ու
ճայթյունը և նրա արձագանքը լեռնե-
րում ու ձորերում ուժեղ էր և խորը:
Սիրում էր բնության այդ տարերքը:
Սիրում էր Լոռվա ամպամած լեռները,
ազատ սարերի բարձունքները և նրանց
ձյունապատ գագաթները:

Լեռներին է դիմում թումանյանն իր
երգերում որպես մանուկ օրերի իր դա-
յակի, որպես իր ներշնչման առարկայի,
որպես ապաստարանի և հանգրվանի,
որպես նվիրական թանգ ու հարազատ
մտերիմի և ընկերոջ:

Որքան հարազատ ու թանգ են եղել
թումանյանի հոգուն այդ վայրերը,
նույնչափ սիրելի և մոտ են եղել այդ
շրջապատի դեմքերը: Սարերում նա ապ-
րել է իր քեռիների շրջանում, իր տատի

Աւ պապի է իր մոք շրջանում՝ միշտ
սիրված, գուրգուրված։ Իր խաղընկերն
էր գառնարած Նիկալը, որի հետ գառ-
ներ է պահել սարերում։

Քեռիները փորձված որսկաններ ու
հովիվներ էին. Հաճախ փոքրիկ Հով-
հաննեսին իրենց հետ սարերն են տարել
ման ածելու.

«...Քեռիս ինձ տանում էր, ման էր
ածում գառների մեջ,— զրում է թու-
մանյանն իր «Ահմադը» պատմված-
քում,— հետր հանդիցը հաղարձի կարմիր
ճյուղեր էր բերում ինձ համար, իսկ ի-
րիկունները հանում էր սրինդն ու
ածում։

Ու աստղալի, լուսնյակ գիշերները,
ահագին խարույկի շուրջը բոլորված,
ծափ էին տալի, ինդում էին իմ պապն
ու տատը, իմ քեռիները, իսկ ես թիթե-
ռի նման թռվում, պար էիլ դալիս
նրանց շրջանի մեջ»։

Քեռիներն իրենց հետ նրան սարն են
տարել որսի։ «Աշակերտ վախտը հենց

որ կյուղն էր գտլիս, միամին զնում
էինք որսի, — պատմում էր Մովսես քե-
ռին: — Շատ էր սիրում որսը. թվանքի
հետ էլ շատ էր լավ՝ տեղին տվող էր:
ին ա թվանքը առնում էր, հանդերը, սա-
րերը դուրս գալիս»:

Թումանյանը ձորերում Անդրեաս
քեռու զրոյցն է լսել գայլերի մասին,
նրա հետ միասին արջառսի զնացել,
այդ բոլորը տեսել է, ապրել և հետա-
գայում պատկերել իր երկերում, ինչպես
«Արջառսը», «Գելը», «Շունը» և այլն:

Որսի ժամանակ, թափառելով հան-
դերում ու անտառներում, նա մոտիկից
հանաչում է բոլոր անտառներն ու սարե-
րը: Նա սիրում էր հատկապես՝ Տափակ
մերու աճարկուտը և Արփաթալի կաղըն-
կուտը*):

*.) Կաղնու և աճարի խիտ ու գեղեցիկ անտառներ
գյուղից 15—20 կիլոմետր հեռավորության վրա:

Սիրում էր ավելի սաղարթախիտ,
թափ անտառը։ Անտառի յուրահատուկ
բույրը, ծառերի սովերը, տերևների հո-
վը։ Վճիտ ու պարզ աղբյուրների մոտ,
խոր ու խորհրդավոր անտառի, մեջ սի-
րում էր լսել թռչունների ձայնը, նրանց
տիսուր ծկլտոցը, որ մարդու սրտին թա-
խիծ էր բերում և տիսրություն, ինչպես
«Սըհակ» թռչունի ձայնը Զաղի ձորում։

Առանձնապես դուք էր դալիս նրան
ուշ աշնան անտառը— գույնզգույն տե-
րևներով կանաչ, դեղին, կարմիր, ոս-
կեգույնի հետ և անտառի մեղմ դուրե-
կան օդը՝ հագեցած կանաչ խոտի և հո-
ղի չնչով։

Սիրում էր ուշ աշնան անտառի տե-
րևաթափը, երբ չոր տերևները՝ ոտի
տակ խշում են և ներդաշնակվում ժայ-
ռերի միջից խոխոջացող աղբյուրի հետ։

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Եվ պարզ աշքով ես տեսնում եմ
Հայրենիքս ծաղկավետ,
Այն ճոխ երկրից ես լսում եմ
Անհոգ ծիծաղ լացի հետ...

«Հիշողություն Հայրենիքից» 1890 թիվ

Գեղեցիկ ու փարթամ բնության ծո-
ցում ապրող մանուկ Հովհաննեսի օրերը
միշտ էլ ուրախ չեն անցել: Նրա ուրախ
օրերին գյուղորդել են և խառնվել տիսուր
ժամեր: Նա իր գյարթ և անհոգ օրերին
լսել է գյուղացիների տիսուր երգն ու հա-
ռաչանքը, տեսել է գյուղացու ծանր
կյանքն ու թշվառությունները:

Վաղ մանկությունից նա չփոխում էր
գյուղացիների հետ, մոտիկից դիտում
գյուղացիների չարքաշ ու դժվար կյան-
քը: Տեսնում էր՝ ինչպես գյուղացուն կե-
ղեքում և շահագործում են քյոխանե-
րը, գյուղի վաշխառուներն ու պետական
պաշտոնյաները: Այդ տպակորություն-

Ների արդյունքն է 17 տարեկան հասակում գրված «Գութանի երդը», որի մեջ աշխատավոր ու չքայլոր գյուղացին խոսում է իր ցավերից և կարիքներից.

«...Պարտքատերը դանդատ գընաց,
Քյոխվեն կըգա կը ծեծի,
Տերտերն օրհնեց, անվարձ մընաց,
Կըբարկանա, կանիծի...»

Գյուղում ուր աչք է դարձնում թումանյանը, լսում է թախծալի և ծանր հառաչանք: Գյուղացու հորովելը՝ տրխուր ու միալար, հովվի սրինդը՝ վշտոտ և թախծոտ, ծեր այգեպանի զրույցը՝ լիքր դառն հեծեծանքով... Նա տեսնում է բազմահոգ գյուղացու ճակատի մութամպերն ու խոր տկոսները:

Փողովրդի հազարավոր այդ ցավերը իր հայրենի ղեղեցիկ երկրի ոլատկելը դարձնում են տխուր, բանաստեղծի սիրտը լցնում դառն հեծության հառաչանքներով ու թախիծով: 90-ական թր

վականներին գլուխած իբ մի բանաստեղծ
ծության մեջ թումանյանը ցավով բա-
ցականչում է .

«Իմ հայրենիքս տխուր է, տխուր...
Ուր աշք եմ դարձնում տխուր ավերակ,
Ամեն տեղ միայն, միայն ցավալուր
Հեծության ձայներ, երկշոտ աղաղակ:

Թե երկրագործն է հորովել կանչում,
Թե մայրը որդուն օրորք է ասում,
Թե հովիվն իրան սրինգը հնչում,
Մի հուսակտուր հառաշք եմ լսում:

Աշխարհից, մարդուց հույսերը կտրած՝
Գանգատվում է նա և ցավից տնքում...*)

Գյուղացու գանգատը, նրա հեծու-
թյան ձայնը, հայրենիք երկրի տեսուր

*) «Բանաստեղծություններ», Առաջին հատոր, Մոս-
կվա, 1890 թիվ, էջ՝ 67—69.

պատկերը բանաստեղծի զգայուն հոգում
անջնջելի հետքեր են թողնում, որոնք
հետագայում իրենց արտահայտություն-
ներն են գտնում նրա գրվածքների մեջ:
Թումանյանի սրբեմներից մեկը հենց
«Հառաչանք» անունն է կրում, որի մեջ
լսում ենք 80-ամյա չարքաշ դյուղացու
հառաչանքով լի ձայնը:

...էս խոր ձորերում
էս է չորս քսան տարիս լրացավ,
Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անդամ աշքըս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ*)
Պըտիտ եմ գալի էս ձորի միջին,
Կըորիվս եմ տալի հազար ցավի հետ
Ու չեմ կարենում, չեմ հասնում վերջին...

Այդ պոեմը, որ դյուղացու տնտե-
սական, սոցիալական կյանքի լրիվ պատ-

* Տաբիլեր—տաք կերակուր:

կերն է տալիս, սկսվում է ախուր նախերդանքով, հեծության երդով։ Ծերայգեպանը արտահայտիչն է ողջ գյուղացիության ծանր դրության, այդ ընդհանրացած պատկերացումն է չքավոր գյուղացիության տնտեսական և իրավական դրության։

Տկլոր ու սոված էսպես տարին բուն
Քարի-հողի հետ կոիվ ենք տալի...
... էսքան տանջվելով, քրտինք ենք անում
էլ էն սեերեսն, էլ էն սովածն ենք...

Բանաստեղծի մանուկ հասակի տըխուր տպավորությունների և պատկերների արտահայտությունները տեսնում ենք նաև նրա առաջին պոեմի՝ «Մարոյի» մեջ, որը գրել է 18 տարեկան հասակում՝ 1887 թվին։

Մարոն բանաստեղծի մանկության ընկերներից է։ Իննը տարեկան Մարոյին ամուսնացնում են «աժդահա» չոքան կարոյի հետ։ Մարոն չկարողանալով տանել

անբնական այդ վիճակը, փախչում է, ձորերի մեջ թափառում և քարափի գըլիից իրեն ցած գցելով՝ ինքնասպանություն է գործում: Թումանյանին խորապես ազդում է գյուղական աղաթի ու տգիտության այդ զոհի՝ Մարոյի տիրուք պատմությունը: Նա գրում է «Մարոն»: Իր պոեմի սկզբում վշտով ու թախիծով է հիշում իր հերոսուհուն:

Մարո՛, անբա՛խտ, վաղամե՛ռ,
Դու մանկության իմ ընկեր.
Ո՞րքան ենք մենք խաղացել,
Իրար սիրել ու ծեծե՛լ...

Ահա՛ Նեսոն, թումանյանի մանկության շրջանի մի ուրիշ ընկերը: Նեսոն գյուղի ընդունակ երեխաներից է: Նա նույնպես զոհ է դառնում հին գյուղի չքայլորությանն ու տգիտությանը:

Նեսոն դուրս է մնում դպրոցից, ու բովհետեւ հայրը չի կարողանում վճարել ուսման վարձը՝ տարեկան երեք ոուրլի.

Հետևանքն այն է լինում, որ Նեսոն մը-
նում է անուսում և բռնում է գողության
ճանապարհ:

Իր մանկական հիշողություններից
գրած՝ «Փմ ընկեր Նեսոն» պատմվածքում
Թումանյանն առանձին կարեկցությամբ
է խոսում Նեսոյի գժրախտ կյանքի մա-
սին, չեշտելով, որ Նեսոյի կյանքի վատ
ճանապարհ բռնելը հետևանք էր նրա
նյութական անապահով դրության:

«...Նեսոն աղքատ է... Նեսոն տգետ
է... Նեսոն լցված է գյուղական չարքաշ
կյանքի դառնություններով... նա էլ ե-
թե ուսում առներ, կրթվեր, ապահով
լիներ՝ լավ մարդ կլիներ, գուցե ինձա-
նից էլ շատ ավելի լավը...»

Մի գողություն անելու պատճառով
խիստ պատժի են ենթարկում Նեսոյին,
թեժ այրող արևի տակ թոկով կապում են
սնից: Այդ պատկերը չի հեռանում Թու-
մանյանի մտքից. նա հետագայում էլ,
երբ արդեն հռչակված բանաստեղծ էր,
միշտ սիրով էր հիշում մանկության բն-

կեր Նեսոյին և ցավում էր, որ չքավու-
րության դոհ դարձավ՝ «մաքուր ու միա-
միտ Նեսոն...»

Չքավորության մի ուրիշ զոհն էլ 12
տարեկան Գիքորն էր, որին հայրը—Համ-
բոն—քաղաք է տանում՝ մի գործի տա,
մարդ դարձնի, իրեն նեցուկ ունենա,
բայց քաղաքում անխնա շահագործվե-
լով, ծեծվելով բազաղ Արտեմի կողմից,
Գիքորը հիվանդանում է ու մեռնում...

Մարո, Նեսո, Գիքոր—ահա թուման-
յանի, գրվածքների մանուկ դեմքերը. Նր-
անք բոլորն էլ հեղինակի մանկության
շրջանի տպավորությունների հետ են
կապված: Բոլորն էլ հին, նահապետա-
կան գյուղի, տղետ ու չքավոր գյուղի և
նրա նախապաշարումների ու աղաթի զո-
հերն են:

Նրա վրա խորի տպավորություն է
թողնում և հայ գեղջկուհին իր վշտոտ
դեմքով, իր ծանր կենցաղով և իրավա-
գուրեկ վիճակով, այդ է պատճառը, որ
թումանյանը իր լեղենդներում ու պոեմ-

Ներում առանձին կարեկցությամբ է
պատկերում հայ գեղջկուհուն:

Գյուղում, գյուղացիների շրջանում
ապրելով, թումանյանը մոտիկից տես-
նում է ու մասնակից լինում նահապետա-
կան գյուղի գեղջկական կյանքին, նրանց
նիստ ու կացին, նրանց կենցաղին ու սո-
վորություններին: Նա մասնակցում է
գյուղի բոլոր ժողովրդական տոններին,
ուխտագնացություններին, բարիկենդան
օրերի խմբական, պարերին ու խաղերին:
Նա առանձնապես սիրում էր՝ Վարդավա-
ռը և Համբարձման տոնը՝ այդ օրվա
ծաղկաքաղը, հարսն ու աղջիկների վի-
ճակ հանելը, ջանգյուղումը: Այդ օրերը
թանգ էին նրա համար որպես ծաղկի ու
երգի օրեր, որպես ժողովրդական առողջ
և կենսուրախ երգի ցուցադրման օրեր:

Շատ էր սիրում գյուղի հարսանիքը՝
զուռնադհոլով, ուրախ շուրջպարն ու
կոխի տեսաբանը, որը հետագայում
պատկերում է իր երկերում, հատկապես
«Անուշ» պոեմում:

ԴԱԵՂԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Գյուղում, հայրական տանը, թու-
մանյանը կանոնավոր կրթություն չէր
կարող ստանալ։ Այդ ժամանակ գյու-
ղում—«ոչ ուսումնարան կար, ոչ դաս,
ոչ դաստիարակություն»։

Նրա դպրոցը տունն էր, գյուղական
միջավայրը ու լեռնական հարուստ բնու-
թյունը. նրա ուսուցիչներն էին՝ հայրը,
մայրը, տատերը, գյուղի հեքյաթ պատ-
մող ծերերը և վերջապես՝ ինքը՝ ժողո-
վուրդը։

Թումանյանն իր նախնական գրաճա-
նաչությունը ստանում է հոր մոտ։ Հոյ-
քը թեև դյուղի գրադետներից և տռաջա-
վոր մարդկանցից էր, բայց քաղաքից
կտրված լինելով, զիր-գրականություն
քիչ ուներ, եղածն էլ ավելի կրոնական
գրքեր էին, ինչպես՝ Սաղմոս, Ժամա-
գիրք և այլն։ Հոր գրքերից առաջինը,
որ կարդացել է ու սիրել, եղել է՝ Սար-
դիս եպ. Հասան-Զալալյանի դիրքը.

«Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան»։ Այդ գրքի ընթերցանության տըպավորության տակ նրա մեջ շատ վաղ հասակում սեր է զարթնում դեպի անցյալի ուսումնասիրությունը, որի մեջ իորբանալուն նպաստում են՝ պատմական հուշարձաններով և արձանագրություններով հարուստ Լոռու շրջանի վայրերը։

Ութ տարեկան հասակից նա սկսում է գրել-կարդալ սովորել իր հորեղբայր՝ Գրիշկա բիձու նորաբաց դպրոցում։ Գրիշկա բիձան դյուզի տիրացուն էր։ Նա դյուզի երեխաններին հավաքում էր իրենց տան օդայում ու դպրոց բացում։ Այդ դպրոցում մատիտներն արձիճից էին, թանաքը՝ կակաչ ծաղկից, որ իրենք աշկերտներն էին պատրաստում։ Բացի գըրել-կարդալուց, Թումանյանը Գրիշկա բիձու մոտ սովորել է նաև երգել։ Սակայն, աշկերտները հաճախ դասերին կատակներ ու չարաճճիություններ էին անում, օգտմելով իրենց ուսուցչի թույլ և խեղճ բնավորությունից։

Թումանյանը Գրիշկա բիծու դպրոցում մնում է միայն մի քանի ամիս, նա այստեղ շատ քիչ բան է ստանում, որովհետև «ուսուցիչն» էլ հազիվ գրաճանաչմի տիրացու էր:

Այնուհետև Թումանյանին տալիս են Սահակ վարժապետի դպրոցը, ուր մնում է երկու տարի: Այդ դպրոցը նույնպես առանձին բան չի տալիս նրան: Սահակ վարժապետի դպրոցի պատմությունը Թումանյանը հետեւյալ ձեռվ է նկարագրում իր «Ինքնակենսագրության» մեջ:

«Մի օր մեր զուանը մայրս ճախարակ էր մանում. ես խաղում էի. մին էլ տեսա, քոշերը հաղին, երկար մաղերով ու միրուքով, երկաթե զավազանը չըխկացնելով՝ մի օտարական անցավ:

—Հասի՞ր, էդ կլեկչուն կանչիր, ամանները տանք կլեկի— ասավ մայրս: Խաղս թողեցի, ընկա ուստի ետեից, կանչեցի: Դուրս եկավ, որ կլեկի չի, այլ մեր աղջական, փեսա՝ տիրացու Սահակն է: Սկսեցին զրույց անել: Տիրա-

ցուն խոսք բայ արավ իր Շիտության
մասին:

— Տիրացու ջան, բա ի՞նչ կլի, մեր
զեղումը մնաս, երեխանցը կարդացնես,—
խնդրեց մայրս:

— Որ դուք համաձայնվեք, ինձ պա-
հեք, ես էլ կմնամ, ի՞նչ պետք է անեմ,—
հայտնեց տիրացու Սահակը:

Գյուղումն էլ տրամադրություն
կար, և մի քանի օրից հետո, տիրացու
Սահակը դարձավ Սահակ վարժապետ:

Մի օթախում հավաքվեցինք մի խումբ
երեխաներ, ողա ու աղջիկ, շարվեցինք
երկար ու բարձր նստարանների վրա,
եղավ ուսումնարան, և այստեղից սկսե-
ցի ես իմ ուսումը:

Մեր Սահակ վարժապետը մեզ կա-
ռավարում էր «գավազանավ երկաթյավ»:
Իր երկաթե գավազանը, որ հբացանի
շամփուրի էր նման, երբեմն ծռում էր
երեխաների մեջքին. ականջները «քոքը-
հան» էր անում, և մեծ կաղնենի քանո-

նով «շան լակոտների» կաշին պլոկում։
Ես չեմ կարողանում մոռանալ մանկա-
վարժական այդ տեռորը։

Վարժապետի առջև կանգնած երե-
խան սխայ էր անում թե չհ՝ սարսափից
իրեն կորցնում էր, այլևս անկարելի էր
լինում նրանից բան հասկանալ, մեկը
մյուսից հիմար բաներ էր դուրս տալիս։
Այն ժամանակ կարմրատակում, սպառ-
նալի՝ չուխի թերը ետ ծալելով, տեղից
կանգնում էր վարժապետը ու բոնում...
Քիթ ու պոռւնկն արյունոտ երեխան դա-
լարվելով բառանչում էր վարժապետի
ոտների տակ, զանազան որտաճմ լիկ ա-
ղաջանքներ անելով, իսկ մենք, սփըթ-
նած, թուքներս ցամաքած, նայում էինք
ցրտահար ծտերի նման շարված մեր
բարձր ու երկար նստարանների վրա։ Չո-
րացած երեխային վերցնում էին մեջտե-
ղից:— «Արի!», —դուրս էր կանչում վար-
ժապետը հետեյալին... .

Մի երեխայի ուսումնարան դրկելիս
հայրը խրատել էր, թե՝ «Վարժապետը

ինչ որ կանի, ոռւ էլ էն ասա»։ Եկամ։
Վարժապետն ասում է՝ «Ասա այր»։
Նա էլ կրկնում է՝ «Ասա այր»։
— Տո՛, շա՛ն զավակ, ես քեզ ասում
եմ՝ «Ասա այր»։
— Տո՛, շա՛ն զավակ, ես քեզ ասում
եմ՝ «Ասա այր»։

Այս երեխայի բանը հենց սկզբից
վատ գնաց և այնքան ծեծ կերավ, որ մի
քանի ժամանակից «ղաչաղ» ընկավ, տա-
նիցն ու գեղիցը փախավ, հանդերումն
էր ման գալիս։ Բայց մեր Սահակ վար-
ժապետի չարությունից չէր դա։ Այդ
տեսակ անաստված ծեծ այն ժամանակ
ընդունված էր և սռվորական բան էր մեր
գյուղական ուսումնարաններում։ Գյու-
ղացիներից էլ շատ քչերն էին բողոքում։

Այդ ծեծերից ես չկերա, որովհետեւ
վարժապետը քաշվում էր հորիցս, բայց
մանականդ՝ մորիցս էր վախենում։

Չմոռանամ, որ Սահակ վարժապետին
սիրում էին մեր գյուղում և մինչեւ օրս
հիշում են»։

ինչպես տեսնում եք, Տեր-թողիկյան
տիպի դպրոցներից էր Սահակ վարժա-
պետի դպրոցը։ Կործագլրում էին նույն
«մանկավարժական մեթոդները»՝ ծեծ-
գավազանով, հայհոյանք, և դրա հետ-
միասին՝ մտավոր չնչին պաշար։ Սա-
հակ վարժապետը սովորեցնում էր գրել-
կարդալ։ Բոլոր դասագրքերը կրոնական
բովանդակություն ունեին։

Թումանյանի դասընկերներից մեկը
պատմում էր, թե ինչպես աշակերտները
սուավոտը վաղ վեր էին կենում, վառա-
րանը վառում, օդեն մաքրում, տաքացը
նում և հերթով վարժապետի համար մա-
ծուն և հաց էին տանում, աղբյուրից
ջուր բերում, ամեն մեկն իր տանից
վարժապետի համար փայտ էր տանում,
իսկ ամառները գնում էին գյուղի հանդե-
րը վարժապետի համար մոռու մոշ կտո՞
փայտ հավաքելու։ Այսպես էր պատմում
Գարո բիձեն և թվում էր մեկ-մեկ վար-
ժապետի համար իրենց կատարած ծա-
ռայությունները և ավելացնում։ — «Դա-

սեր պատրաստելու համար ժամանակ չէր
մնում մեզ...»

Ժամանակի պատմական դեպքերից
թումանյանի վրա մեծ տպավորություն
է արել 1877—78 թվականների ոռու-տաճ-
կական պատերազմը։ Այդ դեպքի տպա-
վորության տակ ինքն էլ սկսել է ոտա-
նավորներ գրել։ Իր առաջին գրական
փորձերի մասին խոսելիս՝ նա հետևյալն
է ասում.

«Շատ վաղ եմ սկսել ոտանավորներ
գրել։ 10—11 տարեկան ժամանակս Լո-
րիս-Մելիքովի վրա երգեր էին երգում
ժողովրդի մեջ։ Այդ երգերին տներ էի
ավելացնում և գրում էի զանազան ոտա-
նավորներ— երգիծաբանական, հայրենա-
սիրական և սիրային»։

Երբ թումանյանը տաս տարեկան է
դառնում, 1879 թվի օգոստոս ամսին
Հայրը նրան տանում է Էջմիածին, Գե-
լորգյան ճեմարանը դիշերօթիկ տալու,
բայց Հայրը, այնտեղ տեսնելով Փարա-
ջավոր աշակերտների դեղնած դեմքերը,

և նրանցից մեկին էլ մեռած, իր տղային
հետ է բերում գյուղը:

Այդ մասին թումանյանը իր ինքնա-
կենսագրական նյութերի մեջ դրում է
հետեւյալը.

«Մի անգամ, շատ փոքր, իջմիածին
եմ եղել, միտս է միայն հորաքույրս,
մեր փեսա Վարդանը, նրանց տունը, նր-
րանց դեղին կավե պարիսպն ու պարտե-
զը, ու բաղրիջանի ու պամիդորի թփերը
և նրանց հոտր, կուռկուռները, իջմիած-
նի տաճարի ներսը, փոշոտ ու արեսու-
ճամբեն, փշատի ու նուան ծառերը:

Նոներ, ու դեղին փշատ, Աշտարա-
կը...»

իջմիածնից Դսեղ վերադառնալուց
հետո, հայրը լսելով Զալալօղլու նորա-
բաց դպրոցի մասին, նույն թվականի
աշնանը Հովհաննեսին նրա փոքր եղբոր
հետ տանում է Զալալօղի (այժմ Ստե-
փանավան) և տալիս է Լոռում հայտնի
Տիգրան վարժապետի երկսեռ մեծ և օրի-

նակելի դպրոցը, ուր մնում է երեք տարի:

Թումանյանն իր կենսագրական նյութերի մեջ հետևյալ ձևով է հիշում Գյուղից Զալալօղի գնալու նախընթաց գիշերը:

«Զալալօղի տանելու նախընթաց գիշերը՝ գաթա, թխվածք, ամեն բան պատրաստ էր: Մորս քունը չի տանում: Աղ է աղում երկանքով, լաց է լինում ու խոսում մեզանից իրեն-իրեն մենակ: Ես էլ անքուն տեղիս մեջին լաց եմ լինում:

Ճամբին ձյուն ու քամի. Հայրս երկուսիս՝ ինձ ու իմ եղբորը ձիու վրա դրած, իրեն փարազեն էլ հանած մեղ վրա դցած, ինքը ոտով, ցեխի ու ձյունի մեջ գալիս էր կողքով ձիու հետ ոտով:

Նրա սպիտակ մեծ միրուքը ձյունախառն քամին դրիվ էր տալիս, կրծքին խփում, ուսովր տանում:

Էղ գիշեր հասանք Քոլագերան, մի տաք օդա»:

Քոլագերանից մյուս օրը առավոտը
ձիով ճանապարհվում են Զալալօղի:

ԶԱԼԱԼՕՂԱԿՈՒՄ

Զալալօղին այն ժամանակ Լոռու
վարչական կուլտուրական կենտրոնն էր.
այդտեղ էին գտնվում շրջանի դատաս-
տանական-վարչական բոլոր հաստատու-
թյունները և զորքը: Այնպես որ, Զալալ-
օղին միաժամանակ համարվում էր զին-
վորական գյուղաքաղաք: Գտնվելով
Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ տանող խճու-
ղու մրա՞նակ առևտրական կենտրոն
էր: Բնակչության մեծ մասը հայեր էին,
որոնք պարապում էին գլխավորապես
առևտրով և արհեստներով, իսկ ոռւսնե-
րը՝ գյուղատնտեսությամբ:

Իր կենցաղով, կյանքով և նիստ ու
կացավ Զալալօղին տարբերվում էր Լո-
ռու մյուս գյուղերից, իսկ երբ 80-ական
թվականներին չնորհիվ Տիգրան Տեր-
Դավթյանի ջանքերի բացվում է երկսեռ
երկդասյան դպրոցը, է՛լ ավելի է բարձ-

բանում Զալալօղլու կուլտուրական մահարդակը:

Դպրոցի տեսուչը ինքը Տեր-Դավթյանն էր՝ ժամանակի կրթված և զարդացած գեմքերից մեկը։ Նա Սարդիս եղ։ Հասան-Զալալյանի սանն էր։ 1866 թվին տվարտել էր Թեոդոսիայի Խալիբյան վարժարանը։ Գարբիել Այվազովսկու սիրելի աշակերտներից էր, Սպանդար Սպանդարյանի դասընկերը։

Տիգրան Տեր-Դավթյանը լավ զիտեր՝ ոռւսերեն, Փրանսերեն, տաճկերեն և Փարսերեն։ 1868 թվին Սարդիս եղ։ Հասան-Զալալյանի հետ, որպես նրաքարտուղարը, ճանապարհորդում է Կ.Պոլիս, ապա Եղիպտոս, Աթենք։ Այդ ճամբորդությունը տեսում է մոտ ութ տամիս։

Արտասահմանից վերադառնալով Զալալօղի, Տիգրան Տեր-Դավթյանը բացում է իր դպրոցը և դարձնում է օրինակելի։ Դպրոցն ուներ կանոնավոր ուսուցչական կազմ։ Ավանդվում էր հայոց լե-

զու և պատմություն, ոռւսաց լեզու, աշխարհագրություն, թվաբանություն, երգեցողություն, Փրանսերեն, Ֆիզիկա, ընդհանուր պատմություն և այլն:

Դպրոցի տեսուչը և պատմության դասատուն ինքը Տեր-Դավթյանն էր: Նա դպրոցին կից ուներ հարուստ դրադարան, որից օգտվում էին դպրոցի աշակերտները:

Դպրոցում աշակերտները հագնվում էին տարազով, ձմեռը տղաները՝ մոխրագույն, աղջիկները՝ շագանակագույն, սև գոգնոցով, իսկ ամառը բոլոր աշակերտները սպիտակ զգեստ էին հագնում: Ահա այդ դպրոցն է ընդունվում տաս տարեկան Հովհաննեսը: Իր պատմվածքներից մեկում Թումանյանը հետեւյալ կերպ է նկարագրում իր այդ դպրոց դնալը:

«...Մի երկու տարի մեր գյուղի ոսումնարանում կարդալուց ետք, հերսնաճ տարավ մեր կողմերի գյուղաքաղաքը, էն տեղի ուսումնարանը տվավ: Էս

արդեն բոլորովին ուրիշ աշխարհք էր:
Տները սիպտակ, կարմիր տանիքներով,
ժողովուրդը զուղված ու մաքուր, ու
սումնարանն էլ մեծ ու գեղեցիկ, ու ոչ թե
մի վարժապետ, ինչպես մեր դյուդումն
էր, այլ մի քանի վարժապետ ու մինչև
անդամ վարժուհիներ, որ նորություն էր
ինձ համար ու զարմանալի, սակայն շատ
դուրեկան:

Տեղին ու դպրոցին վայել իմ հաշ
դուստն էլ փոխեցին: Բազաքացի աշա-
կերտի շորեր հազա, գեղեցիկ, մա-
քուր*):

Թումանյանի դասրնկերուհիներից
մեկը՝ Տիղրան Տեր-Դավթյանի մեծ աղ-
ջիկը՝ Վերդինե Բաբաջանյանը հետե-
վյալն էր պատմում՝ թումանյանի Զա-
լալօղլու դպրոցն ընդունվելու մասին.
«Տեր-Թադևոսը հորս յափ բարեկամնե-
րից էր. միշտ մեր տանն էր իջնում, և
շատ էինք սիրում նրան: Երբ դպրոցը

*) «Իմ ընկեր Նեսոն»:

բացվեց, հայրս խորհուրդ տվեց Տեր-
Թաղկառին, որ իր տղային բերի տա նոր
դպրոցը: Տեր-Թաղկառը գնաց Դսեղ, մի
քանի օրից հետո, իրեն տղին բեռով,
բարձով բերեց Զալալողի: Առաջին եր-
կու երեք ամիսը Հովհաննեսը մեր տանն
էր ապրում, ինչպես ասում են՝ զարիբու-
թյան գոտիկր մեր տանը բաց արեց»:

Տեր-Դավթյանի տանը Թումանյանն
իրեն լավ էր զգում—օգտվում էր տեսչի
հարուստ գրադարանից, ապրում էր
Տեր-Դավթյանի երեխաների շրջանում,
ունեին իրենց ընթերցանության ժամե-
րը, խաղեր, զբուց, երգ և այլն:

Այնուհետև հայրը իր տղային տա-
լիս է մի կոշկակարի՝ Խուրջուդ Գրիգոր-
յանի տանը բնակվելու: Թումանյանն
այդտեղ մնում է շատ կարճ ժամանակ,
որովհետև բազմամարդ բնտանիք էր և
երեխաները խանգարում էին դասերը
պատրաստելուն:

Այդաեղից փոխադրվում է իր հորա-
քրոջ՝ Թալալ Հոքրի— Սաղաթելլյանների

տունը, որ գտնվում էր Զորագետի մա-
փին, մի շատ գեղատեսիլ տեղ, բարձր
ժայռի գլխին:

Թումանյանի հորաքույրը, թուման-
յանի գաւընկերների պատմելով, շատ
բարի, սիրալիր և հյուրամեր կին էր:
Առանձին գուրզուրանք ուներ մանուկնե-
րի նկատմամբ. նրանց սեր ու մածուն էր
տալիս, հեքյաթներ էր պատմում՝ կտ-
խարդական աշխարհքից, օձերից ու նր-
բանց թագավորներից, խոսում էր սա-
տանաների մասին, թե ինչպես նրանք
զուռնա-գհոլով խարում են մարդկանց և
տանում հարսանիք: Այդ բոլորը ուժեղ
տպավորություն էին անում թումանյա-
նի վրա, և նա իր վառ երևակայությամբ
լրացնում էր թալալ նանի հեքյաթները:
Հորաքրոջ մոտ կարճ ժամանակ ապրե-
լով՝ մի ծանր հիմանդից ընկճվելով,
թումանյանը շուտով փոխադրվում է
Ասատուր Խանաղյանի տունը, որ գտըն-
վում էր ձորի գլխին և որտեղից գեղե-
ցիկ տեսարան էր բացվում զեսլի Լոռու

դաշտերն, ու լսվում էր զետի վշտոցը։
Այդ բնակարանից նա գոհ էր, և այդտեղ
է, որ 1881 թ. գրում է իր առաջին ման-
կական ուսանավորները։

Այդ տանը նայ իրեն լավ էր զգում և
գոհ էր իր տանտիրուհուց՝ բարի, և
հյուրասեր Սալոմեից։ Այդ տանն էլ մը-
նում է մինչև Զալալօղլուց հեռանալը։

Թումանյանը դպրոցի թեև ընդու-
նակ, բայց ծույլ աշակերտներից էր։
Թվաբանությունից և ոռոսաց լեզվից
թույլ էր, իսկ մյուս առարկաներից,
հատկապես Հայոց լեզվից և պատմու-
թյունից, շատ էր ուժեղ։ Նա առանձնա-
պես սիրում էր Տեր-Դավթյանի պատմու-
թյան դասերը և համբաւակությամբ էր
լսում նրա պատմածները՝ Եղիպատոսի, Ե-
ղիպտոսի բուրգերի, Նեղոս գետի և
գամբարանների մասին։ Այդ բոլորը բա-
նաստեղծի վառ երևակայության վրա
խորը տպավորություն են թողնում։
Թումանյանն այնքան է ոգևորվում, որ
որոշում է գնալ Եղիպտոս՝ իր հետ առ-

նելով և իր դասընկերներին։ Այդ ցան-
կությունը երկար ժամանակ մնաց Հով-
հաննեսի մեջ։

Թումանյանը թե իր արտաքին գե-
ղեցկությամբ և թե իր առանձնահա-
տուկ բնավորությամբ տարբերվում էր
իր ընկերներից։ Սրախոս էր, ինքնավը-
տահ, «իրում էր բնությունը, երազան-
քը»։

Իր մանկության ընկերներից մեկը՝
Անուշտիան Աբովյանն առաջին անգամ
տեսնելով Թումանյանին դպրոցում, հեռ-
վից հիանում է։ Իր հուշերում նա գրում
է. «Նա իր տարիքից անհամեմատ բարձր
ու վայելուչ հասակ ուներ, մշտաժամկե-
նչածեւ աչքեր, արծվաքիթ և աղնվու-
թյուն արտահայտող սպիտակ ճակատի
վրա թուխ գանգուր խոպոպիկներ։ Մի
խոսքով՝ մի արտակարգ հմայիչ գեղեց-
կություն, որ միանգամայն ապշեցրեց
ինձ»*）։

*.) «Հիշողություններ Թումանյանի կյանքից», Ան.
Աբովյան, «Պատկում» 1923 թիվ. էջ՝ 8:

Երկրորդ դասարանից, 1880—81 թվա-
կաններից Թումանյանը սկսում է գրել
ինքնուրույն ոտանավորներ։ Դասընկեր-
ները պատմում են, թե ինչպես նա դա-
սամիջոցին դասարանից դուրս գտլով տ-
ռանձնանում էր գործոցի՝ պարտեզի խոր-
քում, ծառերից մեկի տակ նոտում և
սկսում գրել։

Թումանյանը 1881 թվի մարտին գլ-
րած իր առաջին սիրային ոտանավորը
նվիրում է դասընկերուհիներից մեկին։
Ահա այդ ոտանավորը.

Հոգու հատոր,
Սըրտիս կըտոր,
Դասիս համար
Դու մի հոգար.
Թե կան դասեր,
Կա նաև սեր,
Եվ ինչ դարմանք,
Իմ աղավնյակ,

Զավարութիւն, պարզութիւն կից գրադարանը տեսչի բանկություն,

(1933 թ. Մասնիկալից)

Որ կենդանի
Մի պատանի
Սերը սըրտում
Դաս է սերտում:

1881 թ. մարտ Զալալօղլի

«Հողուս հատոր» ոտանավորի մասին Թումանյանն իր հիշատակարանում գրում է հետևյալը. «1881 թվին այդ ոտանավորը բռնեցին Հմայակն ու Միքայելը. մեր տեսուչ Տիգրան Դավիթիչը ինձ ուզում էր ոռղջի տալ, բայց լացով պլրծա»:

Զալալօղլու դպրոցում Թումանյանը գրում է և մի քանի այլ ոտանավորներ, որոնցից մեկը նվիրում է մի հույն քարհատի՝ Սավա Վարպետին: Այդ վարպետը աշխատում էր Զալալօղլուց դեպի Քոլադերան կայարանը տանող խճուղու վրա և աշխատանքի ժամանակ զոհ է դառնում պայթած քարերին:

Աշակերտ Ժամանակ Թումանյանը շատ էր սիրում պատմել իր հայրենիքից և իր հայրենի բնությունից: Դասընկերներն ասում են, որ նա համով հոտով էր

պատմում ո՞չ միայն տեսածն ու լսածը, այլև առանձին ողբորությամբ և վառ երևակայությամբ լրացնում էր իր տեսած սարերը, ձորերը, սրբնթաց գետն ու գարնան հեղեղները և սարվորների կյանքը:

1883 թվին նա մի երգիծաբանական ոտանավոր է գրում «Հայ վաճառական» վերնագրով, որտեղ ծաղրում է տեղացի ճարպիկ առևտրականներին, որոնք հազար ու մի ձեւերով և խորամանկություններով խաբում էին խեղճ գյուղացիներին և ուստի զինվորներին: Մի ուրիշ ոտանավորի մեջ թումանյանն արտահայտել է բնության սերը, երգելով Զորագետը և նրա ձորը: Այդ ոտանավորը մեզ չի հասել:

Դպրոցում, դասերից դուրս, աշակերտների մի խումբ երեկոները հավաքվում էին տեսչի տանը և նրա երեխաների հետ միասին պարապում էին ընթերցանությամբ: Կարդում էին՝ «Հյուսիսափայլ», «Կոռւնկ», «Փորձ» և այլ ամ-

սուզրերի համարներում՝ զանազան թարգ-
մանություններ ու փոքրիկ պատմվածք-
ներ։ Նրա դասընկերուհիներից մեկը՝
Վարսենիկ Գևորգյանը, որը տեսչի փոքր
աղջիկն էր, հիշում էր և միասմի թվում
այն ժամանակ կարդացած գրքերը՝ Ալ-
Դյումայի «Երեք հրացանակիրը», «Զետ-
տերտոնի ժառանգը», «Խավարից դեպի
լույս», «Պող և Վերգինե», «Մորինզո-
նը», «Քրիստաֆոր Կոլումբոսի ճանա-
պարհորդությունը», Դ. Աղայանի՝ «Եր-
կու քույրը», Բիշեր Ստոուի՝ «Քեսի
Թոմասի տնակը», «Թզուկը» և այլն։

Իր ընկերների ասելով՝ աշակերտա-
կան խմբի համար չափածո երկերը կար-
դում էր թումանյանը։ Դեռևս այն ժա-
մանակ նա սիրում էր կարդալ ոտանա-
վորներ, մանավանդ դրամաներ։ Նրա
սիրած գրքերից էր՝ «Քնար հայկա-
կան»-ը, որտեղից նա մեծ սիրով կար-
դում էր Սայաթ-Նովայի տաղերը։

Այնուհետև սիրում էր կարդալ Մի-
քայել Նալբանդյանի ոտանավորները,

նրա կենսագրությունը. նրա երգերից
ոիբում էր.

«Մանկության օրեր, երազի նման,
Անցաք, գնացիք, էլ չեք դառնալու...»

Առանձնապես սիրում էր կարդալ
«Քնար Հայկականում» եղած ժողովրդա-
կան երգերը և երգիծաբանական ոտանա-
վորները: Սիրում էր Գևորգ Բարխու-
դարյանի թարգմանած Շիլլերի՝ գործե-
րը, «Որոնցից համանում էր հատկապես՝
«Ավագակները» և «Օրլեանի կույսը»:

«Հյուսիսափայլից» կարդում էին՝
«Դքսուհի գը Շեվրեով», «Ֆերիզադեի
Երգը», «Անգլիական լրտեսուհու հիշա-
տակարանը»:

Ընթերցանության ժամերին երբեմն
մասնակից էր լինում և ինքը՝ տեսուչը՝
Տեր-Դավթյանը: Նրա սիրած դիրքն էր
Վիկտոր Հյուգոյի «Թշվառները». նա ու-
ներ այդ գրքի Փրանսերեն պատկերա-
զարդ չքեզ հրատարակությունը. կար-
դում էր հատիկածաբար և թարգմանում

աշակերտների համար։ Կարդում էր «Հա-
վատարմությունը ամեն արգելքի հաղ-
թում է»—Հոֆմանի գիրքը և «Խավարից
դեպի լույս»։

Բայցի ընթերցանությունից, աշա-
կերտները շատ էին սիրում հեքյաթներ
լսել։ Նրանք ազատ ժամերին հավաք-
վում էին դպրոցի պահակի մոտ, որին
քեռի Ակոփ էին ասում ու լսում էին նրա
պատմած հեքյաթները։ Քեռի Ակոփը
պատմում էր՝ «Գյուլի բաղի», «Արարի
Զանգուի», «Դուդի ղուշի» և ուրիշ հե-
քյաթներ։ Բայց ավելի հետաքրքիր հե-
քյաթներ էր պատմում դպրոցի վառա-
րաններ նորոգող՝ գյառդյառեցի ուստա
Սիմոնը։ Ուստա Սիմոնը շատ գրավիչ և
հետաքրքիր կերպով պատմում էր «Հա-
զար ու մեկ գիշերվա» հեքյաթներից, որ
փոքրիկ ունկնդիրները մեծ սիրով և
ուշադրությամբ լսում էին։ Ասում են՝
Թումանյանը շարունակ ուստա Սիմոնի
հետ էր լինում և սիրում էր նրան։

Թումանյանը Զալալօղլումն է լսում

առաջին անգամ «Քաջ Նազար» հեքյա-
թը, բայց ոչ ուստա Սիմոնից, այլ մի
պոլսեցի բուժակից, որը այդ ձմեռ կարծ
ժամանակով հայտնվում է Լոռում և
հյուր է մնում դպրոցի տեսչի տանը:
Ամրան երկար գիշերներին իր շուրջը հա-
վաքած դպրոցի երեխաներին՝ այդ պոլ-
սեցի բուժակը Աշուղ զարիբի խաղերն է
ասում, հեքյաթներ ու ծիծաղաշարժ-
դեպքեր պատմում Քաջ Նազարի արկած-
ներից:

Բացի հեքյաթներից, երեխաները
հավաքվում էին, երգեր սովորում ու
խմբով երգում: Խումբը ղեկավարում էր
Թումանյանը. Երեխաները նրա շուրջն
էին պատվում և նրա հետ լինում: Եր-
գում էին՝ «Մեր ճագուկը փոսում նստած
քում է», «Ճուրտը փչեց», «Է՞ր հեռա-
նաս», հատկապես սիրում էին երգել.

Երբոր բացվեն դռներն հուսո
եվ մեր երկրեն փախ տա ձմեռ...

Այնուհետև խմբով գնում էին շըր-
ջակա ձորերը խաղալու և վազվզելու:
Գեղեցիկ է Զալալօղլու հորիզոնը՝
հարուստ նրա բնությունը։ Մի կողմից՝
Դըվալի կամ Բզովդալի լեռնաշղթան է,
մյուս կողմից՝ Լալվարը, իսկ երրորդ
կողմից՝ Ղարախաչի գեղեցիկ լեռնագո-
տին՝ ամպոտ լեռնաշղթաներով։ Ամառ
չքնաղ է Վարանցովկայի, այժմ Կալինի-
նոյի գաշտավայրը. թավշանման կանա-
խոտ, բազմերանգ, բուրումնալի ծաղիկ-
ներ, լեռնային թարմ ու կենսարար օդ։
Երջակայքում կան գեղեցիկ զբոսավայ-
րեր, ինչպես՝ Գոմերի, ձորը, Օռան Լո-
ռին, Արջասարը, Զալալօղլու ձորը, Լո-
ռու բերդը, Տեր Ռւհանանց գոմերի ձորը
և այլն։ Աշակերտները խմբով գնում էին
այդ ձորերը զբոսնելու, գետում լողա-
նալու, ձուկ էին բռնում, թրժնջուկ քա-
ղում, լիածաղիկ հափաքում, բերու-
գյուղը։

Բնության սերը, որ զարթել է
թումանյանի մեջ Դսեղում, գեռես փոքր

Հասակից, ավելի է խորանում այստեղ։
Նա հաճախ է հիշում իրենց գյուղն ու
սարերը, պատմում է իրենց սարի, կյան-
քից ու որսից, սարի եղնիկներից, խիտ
ու մթին անտառներից։

Դպրոցում, աշակերտ ժամանակ,
կենդանիների ձայներից շատ էր սիրում՝
գորտերի կըռուցը, երբեմն թաքնվում
էր դաշնամուրի տակ և սկսում էր գոր-
տերի նման կըռուացնել ու վախեցնել իր
ընկեր-ընկերուհիներին։

Տոների արձակուրդին Թումանյանը
միշտ Զալալօղլուց զնում էր գյուղը՝
Դսեղ։ Գնում էր ոտքով. գիշերը մնում
էր Կուրթան գյուղում, առավոտը ճանա-
պարհը շարունակում էր դեպի գյուղը։
Ամեն արձակուրդի տուն գնալիս՝ իր
գրքերն էլ հետն էր տանում, զնելով
հարըգայի (բրդից գործած պայուսակի)՝
մեջ։

Զալալօղլու դպրոցը Թումանյանը
չի ավարտում։ 1883 թվին փակվում է
Զալալօղլու դպրոցը։ Թումանյանը վե-

բագառնում է իրենց գյուղը և միաժամանակ մնում է այդտեղ:

1883 թվի սեպտեմբերին հայրը որոշում է տղային տանել Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցը տալու: Նույն թվի աշնանը ձիով հայրը տղային տանում է Թիֆլիս:

Իր դասընկերներից մեկն այսպես է հիշում Հովհաննեսի Զալալօղլուց հեռանալը. «1883 թվին, մի անձրևային օր, իր հոր հետ միասին գնացին Թիֆլիս: Մենք էլ, մի խումբ ընկերներ, ճանապարհ դրինք մինչև քարի գլուխր և կամուրջի մոտ բաժանվելիս խմբով երգեցինք. «Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից...»: Ինքը գնում էր և ասում ես ձեզ կտանեմ Եղիպտոս...».


Այսպես բաժանվեցինք մենք նրանից 1883 թվի աշնանը»:

Ավելի տխուր և սրտառուչ է լինում հայրական տնից՝ Դսեղից հեռանալը: Հայրը ուզում է տղային տանել Թիֆլիս՝ ուսումը շարունակելու, մայրը դեմ է

լինում տղային գյուղից հեռացնելուն և
այդ պատճառով տանը կոխվ է ընկնում։
«Մի աշնան օր հայրը որոշում է
Հովհաննեսին տանել, իսկ նանը դեմ էր·
ասում էր՝ տղիս հեռացնիլ մի։ Տանը
կոխվ ընկավ։ Հայրը չլսեց. իրան ասա-
ծը արավ։ Մի ձի ունեինք՝ անունը
Ղոաթ. Օհաննեսը էդ ձիուն նստեց։ իսկ
հայրը Քյարին, ու երկուսով ճամբա ըն-
կան դեպի Թիֆլիս։

Նանը գնաց իրան հորանց թաղերը,
տատի հետ նստեց քարին, լաց էլավ,
լաց, թե՝ տղիս տարա՞ն. . . Մենք էլ,
փոքրիկ երեխեք էինք, հետները թռչկո-
տելով, խաղալով գնացինք մինչև Ձաղի
ճորը, ճամբու դրինք ու ետ եկանք
տուն. . . »

Այսպես էր պատմում Հովհաննես
Թումանյանի եղբայրը նրա Թիֆլիս գնա-
լու մասին։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	5
1. Հին լոռին	8
2. Պապերը	21
3. Հայրը	30
4. Մայրը	43
5. Անհոգ եզնարածը	49
6. Խաղերի և հեքիաթների աշխարհում	55
7. Բնության գրկում	69
8. Սարերում	82
9. Գյուղացիների հետ	93
10. Դսեղի դպրոցում	102
11. Զալալ-Օղում	112

Գատ. իմբազիր
Է. ԹՈՓԶՑԱՆ

Վ.Ֆ. 00378. Պատ. 356. Տիրաժ 3000. 41/8 տպագր.

մամուլ. Հեղինակ. 2,5 մամուլ.

Ստորագրված է տպագր. 20/11--46 թիվ

ՀՍՍՌ ԺԿՄ-ին կից Պոլիգ. և Հր. Վարչ, № 1 տ. Երևան 1946 թ

ԳԱԱ Հիմնարար գիտ. գործ.



FL0041988

[504]

ቍናድ 5 በር.

